

17331

ՀԱՆՔԻ ԱՎԱԴԵՍԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

ԿՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

I. ՅԵՐԿՈՒ ՏՈՂ

II. ԱԶԳԱՅԻՆ ԹԾՎԱՌՈՒԹՅՈՒՆ

323.1(47-92)
Կ-19

ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1 9 8 9

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

МИКАЭЛ НАЛБАНДЯН

I. ДВЕ СТРОКИ

II. НАЦИОНАЛЬНОЕ БЕДСТВИЕ

Под редакцией
ОВИКА МЕЛИКЯНА
Комментарии
АН. МАКАРЯНА

323.1(47.925)
Ն-19

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

I. ՅԵՐԿՈՒ ՏՈՂ

II. ԱԶԳԱՅԻՆ ԹԵՎԱՌՈՒԹՅՈՒՆ

Խմբագրությամբ
ՀՈՎԻԿ ՄԵԼԻԿՅԱՆԻ
Կոմենտարներ
ԱՆ. ՄԱԿԱՐՅԱՆԻ

10.07.2013

17331

Տպագրվում է ԽՍՀՄ Գիտությունների Ակա-
դեմիայի Հայկական Ֆիլիալի նախագահության
վարչությանը:

Նախ. տեղակալ Ս. ԿՍՐԱՊԵՏՅԱՆ

ՄԻԲԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 110-ԱՄՅԱԿԻՆ
К 110-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ
МИКАЭЛА НАЛБАНДЯНА



ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Լրացավ 60-ական թվականների մեծ հեղափոխական դեմոկրատ, հայ ազգային ազատագրական շարժման առաջամարտիկ Միքայել ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ծննդյան 110-ամյակը:

Ինչպես հայտնի չե, կուսակցական ու կառավարական ղեկավար մարմինների վորոշմամբ, Արմֆանի Գրականության և Լեզվի Ինստիտուտը տպագրության և պատրաստում Նալբանդյանի Յերկերի լրակատար ժողովածուն՝ հինգ հատորով: Արդեն տպագրության և հանձնված Յերրորդ հատորը: Սակայն, Ինստիտուտն անհրաժեշտ համարեց, մեծ հեղափոխականի ծննդյան 110-ամյակի առթիվ, առանձին գրքույկներով լույս ընծայել նրա հրապարակախոսական կարևորագույն յերկերից մի քանիսը («Յերկու տող», «Ազգային թըշվառություն», «Հեգելը և նորա ժամանակը», «Կրիտիկա» և այլն), վորոնք առաջին անգամն են տպագրվում խորհրդային շրջանում:

Այդ հրատարակությունները հնարավորություն կտան մեր լայն մասսաներին ավելի մոտիկից ծանոթանալու Նալբանդյանի քաղաքական-հասարակական և հեղափոխական գործունեյության կարևորագույն կողմերից մեկին:

ОТ ИНСТИТУТА

Исполнилось 110-летие со дня рождения великого революционного демократа 60-ых годов, борца и вдохновителя армянского национально-освободительного движения Микаэла Налбандяна.

Как известно, согласно постановлению руководящих партийных и правительственных органов, Институт Литературы и Языка Армянского Филиала Академии Наук СССР готовит к печати полное собрание сочинений Микаэла Налбандяна в пяти томах. Уже сдан в набор III том сочинений. Однако, Институт счел необходимым, в связи с 110-летием со дня рождения великого революционера, отдельными брошюрами выпустить в свет некоторые из его важнейших публицистических и научных произведений („Две строки“, „Национальное бедствие“, „Гегель и его эпоха“, „Критика“ и т. д.).

Эти издания дадут возможность нашим широким массам еще более близко ознакомиться с одной из важнейших сторон политическо-общественной и революционной деятельности Микаэла Налбандяна.

ՅԵՐԿՈՒ ՏՈՂ

Ճշմարտությունը կրօն է,
Նորան միայն խնդրեցեք,
Իսկ նորանից վոչինչ:

Robert Owen.

Ազատություն, գոչեցի, թող վորոտա իմ գլխին,
Փայլակ, կայծակ, հուր, յերկաթ, թող դավ դնե թշնամին.
Յես մինչ ի մահ, կախաղան, մինչև անարգ մահու այուն,
Պիտի գոռամ, պիտի՝ կրկնեմ, անդադար, ազատություն:

ԿՈՄՍ ԵՄՄԱՆՈՒՅԷԼ

Հայկական դպրության ասպարեզը իջանկուց հետո, քանի մի անգամ հանդիպեցավ մեզ, յերես առ յերես պատահել անամոթ վատության: Յեվ վոչ անգամ վշտացանք և վոչ անգամ վիրավորվեցանք այդ հարձակմունքներից, այլ մանավանդ ցավեցանք հաթձակվողների վերա. վորովհետև բարոյական հիվանդությունը մինչև ի մահ տիրելով նոցա վերա, պատճառ էր յեղել այդ ցնորական և անդիտակից շարժողութեններին:

Մեք, վաղ ուրեմն, գուցե շատ հառաջ, քան թե գրիչ առինք ու հրապարակ իջանք, գիտեցինք, վոր խավար շրջապատի մեջ բանտարկվածների համար շատ ցավեցուցիչ և ազատ լույսը, թերևս աչքերի նկատմամբ, գիտեցինք, վոր հին խելքերը յերբեք համաձայնելու չեյին խաղաղությամբ տեղի տալ նոր դաշտափարներին, գիտեցինք, վոր նորը պատերազմով

պիտի կանգնեցներ իր դրոշակը հնության ավերակներէ վերա:

Այս գիտութենից հետեցաւ այն, վոր այդ հարձակմունքը, թերեւ շատ անգամ մեր անձին վերա, փոխանակ մեր գաղափարների, վոչ յերբեք կարողացան, և վոչ նաև մի մազի չափ, խոտորեցնել մեզ մեր ուխտյալ ճանապարհից:

Այսոր, վերստին հանդեպ ե յեկանում մեզ խավար տգիտությունը յուր սոփեստական մեծ վայելչությամբ: Նա զարդարված ե այսոր փիլիսոփայի և աստվածաբանի անուններով. այս անգամ յերևում ե նա պ. Չամուռնյանի կերպարանքով...* Յեթե վատությունը, ձեռնածոնների արկղի նման, յերկու հատակ չունի, ապա ուրեմն պ. Չամուռնյանը հասել ե մինչև վատության հատակը:

Յերևակի վերոգրյալ տեսրակը մեզ ուղարկողը գըրում եր, թե Պոլիս ամեն տեսակ մարդերից ցուրտ ընդունելություն ե գտել այդ գրվածքը. իսկ մեր վերա այդչափ ևս սպաւորություն չգործեց, և յեթե այսոր, այդ մասին մի յերկու տող գրելու զիջանք, այդ պ. Չամուռնյանին պատասխանելու համար չե, այլ ընթերցող հասարակությունը հարգելու: Պարոնի վայրի վերո աղճատաբանությունքը ստոր են ամենայն տեսակ քննութենից և Մեղուի և պ. Այվազյանին մեր շնորհակալությունը հայտնելով, չենք կարող, միևնույն ժամանակ, չհայտնել մեր առ ի սրտե կարեկցությունը:

* Տես Յ եր և ա կ. թիվ 87, 1860, 1 ոգոստոսի - հին վոճով, 1861, 1 հունվարի - զոր տնորին և հորինե պ. Հովհաննես Տեր-Վարդապետյան Տերոյնից Չամուռնյան Պրուսացի:

պ. Չամուռնյանի գրվածքին պատասխանելու խորհրդով կորուսած ժամանակի վերա:

Ինքնակոչ փիլիսոփայի գրվածքը ծայրիծայր կարգալով, յերկու շարժառիթ տեսանք, վոր կարապետել են պարոնին դեպի այդ վիհը:

Առաջին, յերբ մեր փոքրությունը վտոք կոխեց Պոլիս, ազգային լրագիրները մի յերկու տող գրեցին մեր մասին, մասնավանդ արևելյան միանգամայն և նահապետական հյուրասիրութենից* շարժված, քան թե պարտականութենից դեպի մեր արժանավորությունը, վորը բնավ պահանջողության հանդգնություն չունի:

Այդ հրատարակությունքը, անշուշտ, ազգի մեծագույն մասին վերա բնավ ազդեցություն չգործելով, յերևում ե թե նետի նման ծակել են չխոստովանված փիլիսոփայի անձնասիրությունը:

Մեր սրտի խորքից ցավում ենք, վոր մեր անունը, թերեւ առանց մեր կամքի և գիտության, մի այդպիսի վիշտ ե պատճառել պարոնին. մյուս կողմից չափավորվում ե մեր սրտի ցավը, տեսանելով վոր պարոնը փարատել ե, կամ գեթ աշխատել ե փարատել, յուր սրտի ցավը խոշոր և զեղջուկ հայհոյությամբ:

* Մեք չենք կարող բառ գտանել, Պոլսի ազգայինների մեզ ցույց տված համակրության մասին, մեր առ ի սրտե անկեղծ շնորհակալությունը հայտնելու: Լուռ ենք, վոր մեր սիրտը զգա և յուր լեզվով խոսի, այսպիսի գեղավածներում նորա խոսքը թեև ուրիշին անյայի, բայց, ըստ ինքյան ավելի վսեմ ե քան թե մարդկեղեն բարբառը: Մեզ յեղած հյուրասիրությամբ մեք ավելի յերջանիկ ենք քան թե այն արկածախնդիր կրոնավորը յերբ Բոսֆորի վերա գտնված մի տան դատիկոնից, հավաքում եր շոգենավի մեջ, գնալու միջոցին, Արմենուհու հրաժարական ժպիտները և ոգային համբույրները և սիրու քաղցր հիշատակներով ամրապնդված ուղղվում եր դեպի Տավրիկ...

Ինչ վոր մեզ ե վերաբերվում, այդ հայհոյություններն ընդդեմ, ուրիշ բան չունենք ասելու, բացի այն խոսքերից, վոր հռչակավոր Ֆոքսը գրեց մի անգլիական լորդի, վոր գրել էր նորան հայհոյությամբ լցված մի նամակ:

«Sir, ձեր նամակը, այս ինչ թվականից, ստացա: Այդ նամակը առաջես ե այժմ, քառորդ ժամից հետո կըլինի քամակումս, վորի մասին շնորհ ունիմ տեղեկություն տալ ձեզ. անձնանվեր

2. Գոֆս»:

Յերկրորդ ե ավելի բխմամբ շարժառիթը, պաշտպանել չարագործ Պողոսը ե պահպանել նորա խախտառակված ճակատի վերա յեկեղեցական անունը: Վորչապի ես գրվածքի սկզբում գործ դնե պ. Չամբուռճյանը յուր նվիրական վերացյալ ե քանգրացյալ բառերը, անշուշտ, կամելով վարագուրել գրելու շարժառիթը, այնուամենայնիվ, այսոր արևի պես հայտնի յե, վոր գրվածքի հոգին, բոլորովին քննականից դուրս, պատկերացնում ե մի կատաղի թշնամություն, յերկրորդ, վոր գրվածքի հետևությունն ե Պողոսը պաշտպանել:

Ինչ վոր մեր ամբաստանված նամակի մեջ ասել ենք, նույնը կրկնում ենք այսոր ե վճռարար հայտնում ենք, վոր մի քայլափոխ ես հետ կոխելու կամք չունինք, վոչ միայն պ. Չամբուռճյանի շաղփաղիկուց ե յուր խորին փիլիսոփայության շոշափելի չքավորությունը հայտնելուց, այլև յեթե նորանից հրավիրված կրոնական ժողովը դիմե դեպի նդովքը, այդ խավար դարերի խավար մնացորդը, ջաղջախ յեղեգը, վոր շատ անգամ գավազան են կարծում վողորմելի մարդիկ:

Սկզբունքների համար մեզ տրված սոցիալիստ,

կարմիր հասարակապետական, Ժ. Ժ. Ռուսսոյի դրությունքը ընդունող ե այլն ե այլն ե այլն ածականների վերա միտքինակ ժպտում ենք ե շտապում ենք հայտնել, վոր չենք ընդունում վոչինչ հեղինակություն (autorité) ե մեր ամբաստանված նամակի մեջ ե վոչ անգամ մի բառ կա Ժ. Ժ. Ռուսսոյից: Բայց յեթե յերկու անգամ յերկուքը չորս ե ինչպես Ժ. Ժ. Ռուսսոյի համար նույնպես ե իմ համար, այդպիսի դիպվածում Ժ. Ժ. Ռուսսոյի դրության հետևող չեղանք, այլ ճշմարտության. իսկ ճշմարտությունը մի մարդու սեպհականություն չե, թեև պ. Չամբուռճյանը այդ մասին ես հայտնե յուր յերեխայամիտ, անդատաւտան պատանջությունքը:

Հարգել ե պատվել հանճարը ե բանականությունը ուսած ինելով վաղուց, անունից յերկյուղ չունինք, վոչ Ռուսսոյի ե վոչ Վոլթեռի, այն, պարտական իսկ ենք մեծարել ե հարգել հանճարը ե բանականությունը, այն աստվածային քուրաները, վորոնցից առաջին անգամ դուրս թուան ազատության կայծերը:

Այն, գիտենք հարգել վոչ միայն Ռուսսոյ, Պրուդոնը, Ֆուրիեն ե Ֆոնթը, այլև Շիլլերը, Գեթեին, Ֆիհտեն, Բանթը ե Հեգելը, ճնշված մարդկության այն անմահ բարեկամքը ե անտարակույս, պ. Չամբուռճյանի աչքում հերետիկոսները ե հերձվածողները: Բայց յերջանություն ե փառք կըհամարինք մեզ, միասին մնալ այդ բոլորի հետ ե միասին անհավատ ե հերետիկոս կոչվիլ, քան թե բաց աչքով մեր մարդկությունը, մեր մարդկային ազատությունը ե իրավունքը ուրանալով, պ. Չամբուռճյանի հետ բռնվիլ բարոյական հարինքից ե ճոճալ մի տղայամտութենից դեպի մյուս սովեստու-

թյունը, մի սխալաստիկականութենից դեպի մյուս արե-
զայամտությունը:

Յերջանիկ կրհամարինք մեզ, հռչակելով մարդկային
ազատությունը, իրավունքների հավասարությունը, վո-
րոնք ստրկացած են կամ բռնակալների, կամ դարավոր
ավանդությունների (tradition) վորեւ խաթամութ ամ-
բոխի (և այս կերպով մարդադիր որենքը շեղված բնա-
կանից, վոչ Մովսիսի տախտակներից, այլ այն շավ-
ղից, վոր բացում էր մարդկային բանականությունը)
բամբասավիլ և հայհոյվիլ, քան թե կրօնական ժողովի
որհնությունը վայելել պ. Չամուռճյանի շնորհակալու-
թյան հետ, Պողոս չարագործը յեկեղեցական ճանա-
չելով, հարստահարության կողմնակից լինելու թեու-
թյամբ:

Դժվ լիցի մեզ. վոչ յերբեք: Պարտավորվածը քահա-
նա ճանաչելով պիտի արհամարհենք քահանայությու-
նը, կամք չունինք. մատնելով չարագործը քաղաքա-
կան կառավարության ձեռքը, միմիայն պաշտպանում
ենք հասարակաց իրավունքը:

Յեթե պ. Չամուռճյանը յերկար տարիներով, հա-
րակցություն ունենալով յեզուիտներին հետ և շատ
անգամ գործիք լինելով նոցա ձեռքում, ամենայն քա-
ղաքական իրավադատության մեջ տեսանում է ինկվի-
զիցիո, հանցանքը մերը չե, այլ յուր տգիտությանը,
վոր չե կարողացել մինչև այժմ ուսանել յավրոպացի-
ների փոքր ի շատե ազատ որենսդրությունքը:

Անգլիական պառլամենտները խավար դոմինիկյան-
ների ժողովները չեն, անգլիական որենսդրությամբ
մարդու անձնավորությունը պաշտպանված է ամե-
նայն կերպ, առավել քան թե Յեվրոպայի մեջ, բայց

Այն հանցանքներ, վոր մահով ե պատժում այդ ազատ
կառավարությունը:

Իսկ մեք Պողոսի համար մահապարտության խոսք
արած չեյինք, և վատությունը միայն հարկադրել էր
պ. Չամուռճյանին քաջքաշելով մեր ասածը, ինկվիզի-
ցիոն հանդես հաներ:

Թող ընթերցող հասարակությունը վերստին կար-
դա Պողոսի չարագործությունքը Մեղուի մեջ և թող
կարդա վոչ վորպես սոսկ լուր, վոր վերաբերություն
չունեն ընթերցողներին, այլ վորպես մարդ և մարդ-
կային զգացողությամբ:

Աղջկա կուսությունը խախտել, հետո ամուսնացնել
նորան յուր մանուկ փոքրավորի հետ, հետո, ստիպվե-
լով առևանդյալ կնոջ բողոքելուց, ամուսնությունը
լուծել և վերստին պսակ դնել մի այլ մարդու հետ:

Մի ուրիշի ամուսնություն հինգ հարյուր դուռուշի
համար լուծել և վերստին այլ մարդու հետ ամուսնաց-
նել:

Հղի կինը կապել և այնքան ծեծել, վոր հղացած
զավակը վիժե և այլն և այլն և այլն:

Մեք սարսափում ենք այս տողերը գրելով, վորով-
հետե արյամբ չափ հարգում ենք մարդկային ազատու-
թյունը և իրավունքը, իսկ պ. Չամուռճյանը, այս հան-
ցանքների մոտից թեությամբ քերվելով, ինկվիզիցիո-
նական ե համարում Պողոսը դատաստանի մատնելը և
մոռածում ե թե այդ անտեղի ու գեղջուկ բացագանչու-
թյամբ պիտի կարողանա բռնաբարել ազատությունը.
Ինեղճ մարդ:

Մեք, մեր ամբաստանված նամակով, այդ չարագոր-
ծությունների համար, մեր կարծիքը Պողոսի մասին
հայտնեցինք այնպես, վոր ավելի ասելու չեյինք, յե-

Թե այն բռնաբարված աղջիկը լիներ մեր քույրը, յեթե այն ծեծված կինը լիներ մեր ամուսինը. բայց կարծում ենք, թե այ. Չամուռճյանը այնպես խոսեցուցեր, ինչպես այժմ խոսեցավ, յեթե Պողոսի Հարազոր-ծուծյան յենթակա յեղած լիներ յուր քույրը կամ կինը:

Ինչի՞ համար ե այս խտրությունը, ինչ բանով ավելի իրավունք ունի այ. Չամուռճյանի պատվելի գուտորը կամ ամուսինը, քան թե մի վանցի լլկված և բռնաբարված անմեղ աղջիկ, քան թե մի նահատակված կին, քան թե մի վավակ, վոր, դեռ հրապարակի լույսը չտեսած, սպանվում ե այ. Չամուռճյանի վարդապետի ձեռքով և մոր արգանդից տեղափոխվում ե դեպի գերեզման:

Յեվ այս տեսակ անասելի և անլսելի վոճիրների համար, Հարազործը յեկեղեցական կամ քրիստոնյա չճանաչելը հանցանք ե կամ անորենություն, ինչպես կամի հավատացնել մեղ պարոնը յուր տխրայական փրկասփայլությամբ:

Յեվ ով ե այն մարդը, վոր պիտի փակե մեր բերանը, այս անորենությունների ընդդեմ բողոքելուց, ով պիտի համարձակի բռնանալ մեր ազատ խղճմտանքի վերա և հարկադրել յեկեղեցական ճանաչել մի պիղծ եյակ, վոր կորուսանում ե յուր սոսկ մարդ կոչվելու իրավունքն անգամ. այ. Չամուռճյանը, յուր փրած ու վաճառված գրիչով, թե՞ կրոնական ժողովը յուր մտացածին իրավասությամբ:

Ինչ ունի մեղ ասելու կրոնական ժողովը, յեթե ասենք նորան, թե կրոնական ժողովի գործը և պաշտոնը ե քննել և դատել հոգևորների այն գործերը:

միայն, վոր ուղղակի վերաբերություն ունին դավանաբանական խնդիրների:

Վոր աշխարհի մեջ տեսված ե, վոր յեկեղեցականը, քաղաքական կամ քրեյական հանցանքների համար դատվի կրոնական ատենի առաջ:

Մեք բողոքում ենք, մինչև այժմ հայոց մեջ յեղած այս անկարգության ընդդեմ: Մեր հոգը չե, յեթե այդ կտորը սխալմամբ անցած ևս ե Սահմանադրության մեջ*. դորա հակառակ դարձուցանում ենք ազգի ուշադրությունը այս բանի վերա և խնդրում ենք սրբագրել, յեթե հիրավի առանց բացատրության ասված ե, թե յեկեղեցականների դատը պատկանում ե կրոնական ժողովի տեսչության: Յեկեղեցականը, քաղաքական և քրեյական գործերի պատճառով պիտի դատվի քաղաքական և քրեյական ատյանների առաջ, միայն կրոնական ժողովի կողմից մի պատգամավորի ներկայությամբ, վոր հարկ դիպվածում պաշտպանե պարտավորվածի իրավունքը, յեթե քաղաքական կամ քրեյական ատյանները հակին դեպի անարդարություն:

Յեվ մի՞թե յեկեղեցականը, գողության, անառա-կության և սպանության համար պիտի հանդիման լինի կրոնական ատենի առաջ, մի՞թե այդ կրոնական ատյանը գողությունը, անառակությունը և սպանությունը պիտի համարե կրոնական խնդիրներ, ուրեմն և կրոնական ժողովի դատաստանին յենթակա. մի՞թե այդ հանցանքները գործող յեկեղեցականը նույն պատիժը կրելու չե, ինչ վոր պիտի կրեր մի աշխար-

* Այս տողերը գրելու ժամանակ մեր ձեռքում չունեյինք Սահմանադրությունը և մեր հիշողությունը զրացավ մեղ ոգնել, ըստ վորում Պոլիս, ճանապարհի վերա, մի անգամ գեթ կարգու-ցինք այդ փրկարար կանոնադրությունը:

հական: Այդպիսի դիպվածում, յեկեղեցականությունը չէ՞ դառնում արդյոք մի ապաստանարան, ուր կարելի յեր ամենայն անորենություն գործել անպատիժ: Յեւ յեթե այդպես պատահի, ձախողակի, այնուհետեւ այդ յեկեղեցականությունը պիտի դատավժիռ նստի ուրիշի խղճմտանքին, պիտի հանդգնի բերան բանալ, մամրդ խրատել, իրավասություն բանեցնել: Վոդորմելը յե այն մարդը, վոր պիտի ընդունե այդպիսի յեկեղեցականությունը:

Մեր համար, որենքի և իրավունքի առաջև, վոչ յեկեղեցական կա, ծայրացյալ իրավունքներով և վոչ անհագագ ստրուկ, զրկված ամենայն իրավունքից և արտոնութենից. յերկու դիպվածում ևս տեսանում ենք լոկ մարդ, բոլոր մարդկային կատարելութեններով և թերութեններով: Ուստի, մինի միտքիկական իրավունքը և պատիվը յերկրորդի ստրուկ համարվելու սուտ փաստի հետ միասին մեր կողմից պ. Չամուռ-ճյանին ընծայելով, շտապում ենք ասել, վոր որենքի և իրավունքի առաջև քննվում է և դատվում է նախ գործը և ապա գործողը: Գործը գնահատելով կարելի յե վարձատրել մի առաքինություն և դարձյալ, պատժել և պատուհասել մի չարագործություն: Բայց չարագործը յեկեղեցական է, մեր փուլթը չէ. մեք կդատապարտենք նորան պատմության առաջև, իսկ պ. Չամուռ-ճյանը յեթե կամի խուսնկ և զմուռս ծխել այնպիսուն, ազանտ է:

Մի գործ կամ մի մարդ պաշտպանելու կամ դատապարտելու ժամանակ մեք հիմնվում ենք միմիայն այն անխախտելի հիմքերի վերա, վոր ազատ իրավունքը և առողջ բանականությունը թելադրում է. հետևաբար

վոչինչ կանխակալ կարծիք, վոչինչ սրբացուցած ավանդութուն չէ կարող արգելք լինել մեզ:

Աշխարհի պատահական կոչումները և պատվանունները չեն կարող որենքի և իրավունքի առաջև միջնորմ լինել հանցանքի և հատուցումի մեջ, վորովհետեւ այս հատուցումը, վերստին կրկնում ենք, մի լոկ վերեփնդրություն չէ, այլ հասարակաց իրավունքի պաշտպանություն:

Հոգևորականությունը, որենքի և իրավագատության առաջև չունի այն միտքիկական խորհուրդը, ինչ վոր ունեցած տեսանում ենք պ. Չամուռ-ճյանի համար:

Հոգևորականք նախ և հառաջ քաղաքացի յեն և ապա հոգևորական, ուրեմն, վորպես կցորդ քաղաքական իրավունքների, պատասխանատու հասարակաց որենքի առաջև:

Մարդկության գլխից անցածը ուսուցել է մեզ, վոր ամենայն յուր մեջ միայն փակված և կենտրոնացած վացություն, սկսած Յեզիպոսի քուրմերից մինչև Պիոս յոթերորդի ձեռքով վերականգնյալ պ. Չամուռ-ճյանի հոգեհարազատքը, ֆլաս տվեցին մարդկության: Այդ կացությունքը, կտրված բաժանված հասարակաց մարմնից, վոգևորված դժոխային յեսականությամբ, բռնաբարեցին ուրիշները և հափշտակելով նոցա ազատությունը, զորացուցին յուրյանց չարաչար գործաշրությունը ազատության:

Այնուհետև մարդիկ ընկան բարոյական գերության մեջ, այն է, մտքի և բանականության գերության մեջ, ուր մարդը համարձակություն չունի ինքնուրույնաբար մտածելու, այլ դատապարտված է հետևիլ յուր դահիճների թելադրության. նա ստիպված է գնալ այն ճա-

նապարհը, վեր ոգտակար ե միմիայն այդ կացութեն-
ներին:

Այո, շատ դարեր գնացին մարդիկ այդ ճանապարհ-
ը, բայց իվերջո, յերբ յերես առ յերես հանդիպեցան
և զարկվեցան անանցանելի պատին, վոր խաչածե կրտ-
րում եր նոցա ճանապարհը, կանգ առին և սկսան մտա-
ծել: Թե վճրչափ փոխված ե այժմ այդ խափար ճանա-
պարհը, կամ թե վճրչափ մարդիկ գեոևս առ թար-
թափ գնում են նորանով, շատ անգամ առաջնորդված
պ. Չամուռճյանի նման մի աղոտ լուսով լապտերի, այդ
խնդիրը այս տեղիս վերաբերություն չունի:

Բայց այս ե բանը, թե պ. Չամուռճյանը, ինչ նը-
կատմամբ արդյոք յեկեղեցականների դասը աշխար-
հականներին անմերձենալի քարոզելով, բարձրացնում
ե մինչև քուրմերի և յեզուխտների կացությունքը:

Վոչ բնավ պիտի ընդունինք այս դրությունը, քա-
նի վոր մեր յեկեղեցականք ժողովրդի ընտրությամբ
և հավանությամբ լինում են յեկեղեցական, քանի վոր
մեր յեկեղեցու կառավարությունը սահմանադրական ե,
քանի վոր մեր յեկեղեցականներին գեոևս շատ բան
պակաս ե յեգիպտական քուրմ կամ յեզուխտ լինելու
համար:

Այս դրությունը մերժելով, վերստին կրկնում ենք,
թե յեկեղեցին ազգն ե, իսկ հոգևորականությունը՝
սպասավոր այդ յեկեղեցուն: Ազգը, ամենայն ուր իրա-
վունք ունի, այդ հոգևորներից մինը յուր լավության
համար պատվելու և սիրելու, իսկ մյուսը, յուր վատ-
թարության համար, դատապարտելու և պատժելու:

Մեր փուլթը չե, յեթե, վոտքից մինչև գլուխ միս-
տիկականությամբ խմորված, պ. Չամուռճյանը նայում
ե հոգևորների վերա, վորպես անմերձենալի մարդերի

վերա. մեր փուլթը չե, յեթե մյուս կողմից կրո-
նական ժողովը յուր տեսչության սեպհական համարում
ե հոգևորների դատաստանը, մեք կրկնում ենք, թե հո-
գևոր անձինք, վորպես մարդ և վորպես անդամ յեկե-
ղեցու, աղատ չեն հասարակաց ազգի անկողոպտելի իրա-
վասութենից և հասարակաց ձայնը, հասարակաց բողո-
քը, մի հոգևորի անորեն գործերից, լիակատար գորու-
թյուն ունի մարդասպանը, գողը, պոռնիկը, շուենը,
հարստահարողը, վեսը, ամբարտավանը, ազգատյացը
և այլն և այլն յեկեղեցու բեմի վերայից չբացնելու
համար:

Թող չվախենա պ. Չամուռճյանը, այս դատապար-
տության հետ վոչ յերբեք հարակից ե այն թատրո-
նական գործողությունը, զգեստավորելով և մերկաց-
նելով յուր քահանայական զգեստներից պարտավոր-
վածը:

Այդ դատապարտության մեջ, վորպես նաև դատա-
վճիռը գործ գնելու մեջ, պաշտոնակատար ե միմիայն
խղճմտանքը և իրավադատությունը:

Այս խոսքերը ասելուց հետո ամենայն իրավունք
տալիս ենք պ. Չամուռճյանին, կամեցածի չափ, մաշ-
տոցի կամ ս. գրքի խոսքերը քաշքաշելու:

Մյուս կողմից, կրոնական ժողովը, յեթե ստուգիվ,
և վոչ վորպես խրտվիլակ*, կա մի այդպիսի ժողով,
ապա ուրեմն նա կազմված չե հոգևորների անարժա-
նությունքը քողարկելով ժողովրդի գայաթակղությունը

* Այս խոսքի վերա դարձնում ենք պ. Չամուռճյանի մաս-
նավոր ուշադրությունը և շտապում ենք ասել, վոր չկամեյինք
խաբարտելակ ասել, վորպես առաջին անգամ չկամեյինք խրտվի-
լակ ասել, թեև պարոնը այն տաղրական սխալը մատին փա-
թեթ եր շինել:

զորացնելու համար, նա կազմված է անիրավությունը պաշտպանելով, հարստահարված ազգին թշվառության մրուրը մինչև տակը խմեցնելու համար, այլ այդի ապականող ազվեսները բռնելու և հոտը գիշատող գայլերը ջնջելու համար:

Ազգը է և հոգևորների համար, ուրեմն և վոչ կրոնական ժողովի համար, այդ գաղափարը թող հանեն միանգամ յուրյանց մտքից, այլ հոգևորը և կրոնական ժողովը յեղած են և կան ազգի համար, և նոցա հարուցանողը, պահողը և գարծալը:

Անցան այն ժամանակները, յերբ մարդիկ վոգելվորվում էին վերացական և միստիկական բաներով, անողորմելի իրական աշխարհը, յերկաթի գավազանը ձեռքում, պահանջում է յուր արդարացի հարկը: Մարդկությունը կապված է յերկրագունդի հետ. փորձերը ուսուցին նորան, յուր յերջանկության և թշվառության պատճառները գտանել յերկրագունդի վերա:

Անցան և անգառնալի անցան այն խավար որերը, յերբ մարդիկ յերջանիկ էին համբուրելով մի սևազլխի քղանց կամ շատ անգամ զոշաքաղությամբ և պոռնկությամբ ապականված մի ձեռք:

Վհհ, ինչ սարսափելի վիհ կա այն անցած որերի և այժմուս մեջ: Այս բուպեյի այդ մարդիկը քաջ գիտելով, վոր արժանավորությամբ էն կարող շահիլ ազգի համակրությունը, փորձ են փորձում բռնանալու նոցա վերա, կոպիտ ուժի ոգնությամբ, կամ յուրյանց խավար ատմութեան մեջ նդովքի փայլակներ փայլատակեցնելով:

Յերանի այն մարդուն, վոր յուր անձը և գրեչը կընվիրեն զոցա անբնական իշխանությունը ազգի վերա պահելու համար, յերանի, վոր կաշխատի ճնշյալ

ժողովրդի իրավունքը իսպառ վոտքի տակ առնելու համար:

Վհյ մեզ, վոր վոչ յերեք պիտի արժանանաք այս յերանության:

Փառք, ի խոնարհ, Յուսկյուտար, պ. Չամուռճյանին...

Պ. Չամուռճյանի և մեր գրվածներից պարզ յերևում է, վոր մեր յերկուքի ճանապարհը այլ է բուրրովին, և սոքա այնպիսի ճանապարհներ են, վոր վոչ բնավ հանգիստում են միմյանց:

Մեր նվիրական պարտականությունն է, վորչափ մեր ույժը կը տանի, սպասավորել մարդկության, քանի վոր միասին ապրում ենք յերկրագունդի վերա. խոստովանում ենք մեր տկարությունը, վոր էնք կարող բաժանվիլ յերկրագունդի մակերևութից:

Պ. Չամուռճյանը, գտանվելով յերկրագունդի վերա, ապրում է շատ հեռի նորա մակերևութից. յերկիրը փոքր է նորա մեծությունը տանելու համար: Շեկսպիրը, Համլետի բերանով, բանտ է անվանում յերկիրը և Ֆուլամ է դարձյալ յերկրի վերա, իսկ պ. Չամուռճյանը թռչում է նաև Որիոնից բարձր....

Դիտենք, դարձյալ պիտի պար գա Հերովդիադան, դարձյալ պիտի աշխատություն հանձն առնու պ. Չամուռճյանը յուր պառավական հերետիկոս և անհավատ խոսքերը մեր համար գրելու. այդ նորա միակ ազդու գենքն է, հասարակաց խոստովանությամբ սեպհականված:

Այդ գենքը, մինչև մեզ հասանելը փշրվող է, ուստի և կարող միմիայն մեր հեղնական ժպիտը շարժելու մյուս կողմից շատ ավելորդ է հայտնել, թե կուրության և բռնակալության մեջ, այո, հավատ չունինք, հավատալով, վոր աստված ազատ է և առաջին լույս:

ուստի և ամենայն հավատ դեպի նա ազատ խղճատան-
քով և գիտակից ազատությամբ:

Կարկատած արեղայական խոսքեր, հավատացնում
ենք, վոր ժանգոտ փարայի արժեք չունին մեր աչ-
քում:

Ահավասիկ մեք կանգնած ենք այժմ, բաց հրա-
պարակի վերա և, թշնամիների զենքերից անխոցելի
մնալու ակնկալությամբ, պատենշ չենք կանգնեցնում
մեր առաջի զանազան սուտ սկզբունքներ, սոփեստա-
կան գաղափարներ, վորոնց չենք հավատում, վոր չենք
ընդունում և վոր մերժում ենք միահամուռ: Մեք խո-
սում ենք պարզ, այնպես, ինչպես առանց կարմրելու
կարող եյինք մեր բանականության հաշիվ ու համար
տալ մեր ասածների համար: Բայց և այնպես վոչ յեր-
բեք արգելաօրթ ենք պ. Չամուռճյանին, որը յոթը ճա-
նապարհ կատարել Բիլուարտի աստվածաբանութենից
դեպի Թեսալոնոսի փիլիսոփայությունը, և այս վերջի-
նից դեպի առաջինը:

Մեք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժո-
ղովրդի իրավունքը պաշտպանելու: Մեր անձը և գրի-
չը չնվիրեցինք հարուստներին, նոքա յուրյանց ար-
ծաթի թումբերի տակ միշտ անխոցելի յեն, նաև բըռ-
նակալների իշխանության մեջ:

Բայց այն խեղճ հայը, այն հարստահարված, վո-
ղորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայը, վոչ միայն
ճնշված ոտարներից և բարբարոսներից, այլև յուր հա-
րուստներից, յուր հոգևորներից և, կիսազբաղեա, ու-
սումնական կամ փիլիսոփա ասվածներից, ահա այն
հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է
մեր ուշադրությունը և նորան դարձյալ, առանց և

վայրկենական յերկմոռության, նվիրեցինք մեր բոլոր
ձլարողությունը:

Պաշտպանել այն հայի առաթուր կոխված իրա-
վունքը և մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը:
Յեւ այս նպատակին հասանելու համար չե պիտո ըն-
ձլրելինք վոչ բանտի և վոչ աքսորի առաջի, վոչ մի-
այն բանիվ և գրչով, այլ և զենքով և արյունով, յեթե
մի որ արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և
մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել
մեր արյունով:

Ահավասիկ մեր դավանությունը, վորի մեջ տեսա-
նում ենք ազգի փրկությունը:

Քրքրելով մեր անբաղդացած ազգի թշվառություն-
ների տարեգիրքը, ինչ ենք տեսնում:

Վճրտեղ մի գայթակղություն, վորի պատճառը չեր
յեկեղեցական, վճրտեղ հարստահարություն, վորի հե-
ջոսը չեր յեկեղեցական, վճրտեղ խռովություն, վորի
խմորը չեր յեկեղեցական:

Այն, ժամանակը լցված է, ուստի և հրապարակի
առաջի ասում ենք, տերութենական լրտես—յեկեղեցա-
կան, ազգը մատնող և դավաճանող—յեկեղեցական,
փառքի և պատվանշանի համար, թողունք նյութական
կողոպտուր... Կաթողիկոս թունավորող—յեկեղեցական,
յեկեղեցի կողոպտող—յեկեղեցական, չարաչար արբե-
ցության համար պատուհասվելուց փախչելով, յուր յե-
կեղեցուն դրժող և դեպի պապականություն դիմող—
յեկեղեցական, կաթողիկոս չընտրվելու համար հավատն
ուրացող—յեկեղեցական, հրապարակյալ հակաճառու-
թյան մասին դատաստանից խիթալով վեղարը գետնին
զարկող, կրոնավորական կարգը ուրացող և մինչև յուր
անասնական կյանքի վերջը բողի հետ կենակից—յեկե-

ղեցական, դպրոցների գումարը անհետացնող—յեկեղեցական, ի վերջո ամեն բան յեկեղեցական, վասնզի ձանձրալի յե մի ըստ միոջե թվել:

Իրավունք չունենալ արդյոք Հյուսիսափայլը հայոց յեկեղեցու վտարից մինչև գլուխ քեփարմը պահանջելու:

Այս, մի տեսակ մարդիկ, կարծելով, թե Հյուսիսափայլի խնդրած վերանորոգությունը վերաբերվում է դավանաբանության, թե առին ու թռան, վոհ, վոհ, Հյուսիսափայլը բողոքականություն է խնդրում գոչելով:

Հյուսիսափայլը կրոնական որագիր չէ և դավանաբանության հետ բնավ վերաբերություն չունի: Նորան հերքե է, և յուր պարտքը լի կշռով կատարած պիտի համարի, յեթե կարողանա յերկրայինը միայն քարոզել, ասողերից վեր չկա Հյուսիսափայլ: Ուր թողունք, վոր Հյուսիսափայլը ասած եր, թե հարկավոր է, վոր այս բեֆորմը կատարվի ինքնուրույնաբար, հոռի մնալով պապական և բողոքական յեկեղեցիներից:

Կրոնական հավատալիքը, վերացական բաներ լինելով, այլ և խղճմտանքի սահմանի մեջ ամփոփված, պիտի վերանորոգվին կամ հնաճան յուրաքանչյուր անձին սրտի և հոգու մեջ լրացյալ ազատությամբ: Վոչ վոք իրավունք չունի բռնաբարել ուրիշի խղճմտանքը և սրտի ազատ խոստովանությունը և Հյուսիսափայլը, համարձակվում ենք այսոր ասել, ազատամտության կողմից վերջին որագիրը չլինելով, վոչ յերբեք ներած է ինքյան և վոչ բնավ պիտի ներե ուղղել յուր հայացքը մի այնպիսի կետի վերա, ուր մի ուրիշի ազատությունը բռնաբարել կամ գեթ սահմանավորել կենթադրվեր:

Հյուսիսափայլի խնդրած բեֆորմը վերաբերվում էր յեկեղեցական կառավարչության, բեֆորմ, վորով պիտի

տի սահմանարվեյին վոչ միայն Պողոսը և Նիկողոսը, վորոնց մասին Հյուսիսափայլը բողոքած է ժամանակ առ ժամանակ, այլ և շատերը... այլ և Յերուսաղեմի միաբանությունը*:

Պ. Զամուռճյանի կարկատած աստվածաբանությամբ յեկեղեցականների գործերը պահվում են կրոնական ժողովին, այսինքն, նույն իսկ յեկեղեցականներին, և ազգը իրավունք չունի այդ բաների մեջ խառնվելու, վորովհետև յեկեղեցին կազմողը է ազգը, վորովհետև յեկեղեցին ազգինն է. հրաշալի լուրիկա:

Վոչ յերբեք, վոչ բնավ:

Մինչ իսպառ բողոքելով, մինչև այժմ յեղած հոգևորական չարաչար կառավարութենից և Հյուսիսափայլի խնդրած բեֆորմը հետ չառնելով, կրկնում ենք այսոր նույն պահանջողությունքը:

Այս, բեֆորմ խնդրում ենք այն սկզբունքների մեջ, վորոնցից կախված են հոգևոր մարդերի վորևս պաշտոնի ստանալը:

Բեֆորմ պահանջում ենք յեկեղեցու անտեսական կառավարության մեջ, վորպեսզի այսուհետև գեթ յեկեղեցական գանձերը չհափշտակվին, չզողացվին և յե-

* Լսում ենք, թե Յերուսաղեմի միաբանությունը մի տեսակ է հրատարակել Մեղուկ (Պոլսի) և Մյուսուստի ընդդեմ: Գուցե այսուհետև դժվար լինի այդ որագրերի արդո հրատարակողներին, յուրյանց որագրի մեջ, պաշտպանել յուրյանց սրտի վկայությունը, իրթալով կրոնական ժողովի հարձակմունքից: Այդպիսի վատաբաղդ զիպվածում Հյուսիսափայլի եջերը բաց են նոցա համար, ուր մնաց, վոր Լոնդոնում ևս զբված է արդեն հայկական ազատ տպագրության համար մի մամուլ: Լսում ենք, թե Փարիզ լրագրերը մանրամասն տեղեկություն պիտի տա այդ տպարանի մասին, վոր մի նոր առհավատչյա յե ազգի հառաջդիմության, թեև անգլիացոց ձեռքով:

Ֆեդեցական վոսկի և արծաթի սպասքը հրեա վոսկե-
րինների քուրանների մեջ չհալվին...

Բեֆորմ պահանջում ենք հոգևոր իշխանների և
առհասարակ յեկեղեցականների դեպի ազգը ունեցած
հարաբերության մեջ: Պարտական են նոքա ուղղել
յուրյանց ընթացքը. մինչև այժմ, վարձկան պորտա-
բույծ և վոչ հովիվ հոտաբույծ, մինչև այժմ նոցա հա-
մար բողոքել և մարգարեն. «Ո՛հ հովիւք, որք զանձինս
արածէք և ոչ զխաշինս»:

Բեֆորմ պահանջում ենք յեկեղեցականների կրթու-
թյան և դաստիարակության մեջ: Քահանա ունինք,
վոր կարդալ չգիտե. քահանա ունինք, վոր հայերեն
չեն կարող խոսել:

Բեֆորմ պահանջում ենք յեկեղեցականների ձեռ-
նադրության պայմանների մեջ, մինչև այժմ «Առ մեզ
անպէտ առ ամենայն կացութիւն մարդ, պիտանացու
դատի առ հոգևորականութիւն*» մինչև այժմ սիմո-
նականությունը վերջին տեղը չունի...

Բեֆորմ պահանջում ենք առհասարակ յեկեղեցա-
կան կառավարության մեջ, վոր խառն ի խուռն և
անկարգությամբ հառաջանալով, մեծ մասով պատճառ
և յեղել ազգի դարավոր թշվառության:

Այս վերջին պարբերության ընդդեմ, մասնավորա-
պես, պիտի յեռ գան դարձյալ ախտերը, պիտի դար-
ձյալ կրկնեն նույն բանը, ինչ վոր վաղուց արդեն լը-
սում ենք զանազան հոգևորներից, թե նոցա արդյուն-
քըն և, վոր հայոց ազգը ապրում և մինչև այժմ աշխար-
հի յերեսին:

* Ի նամակէ մերմէ առ վեհափառ կաթողիկոսն ամենայն
հայոց, որ ի 11-էն փետր. 1860 ամի, ի Ս. Պետերբուրգ քա-
ղաքէ:

Յեթե կան մի տեսակ մարդիկ, վոր ընդունում են
այս սնոտի պարծանքը յեկեղեցականների, վոչ միայն
չկատարած, այլ և յերազում անգամ չտեսած, գործի
մասին, մեր փուլթը չե. մեք մեր կողմից հոգու ամե-
նայն զորությամբ մերժում ենք յեկեղեցականների այդ
մտացածին արդյունքը և խնդրում ենք գործ ցուցանել
մեզ:

Ինչո՞վ պահեցին ազգը, դպրոցներով, մատենադրու-
թյամբ, քարոզությամբ, ընկերություններով, ուր են
ապա այդ բաները, ուրեմն ինչո՞վ... և վերստին, ինչո՞վ:

Այս բոլորի հակառակը ապացուցանելու համար
փաստերը մեր ձեռքում կանգնած ենք և այսուհետև
հայի պարտականությունն և անխնա հանդիպել հո-
գևորներին, վորովհետև հետախաղացության և ռեակ-
ցիոյի անպարծանք դրոշները նոցա գլխի վերա յեն
փողփողում մասնավորապես:

Մեր դրոշը հայտնի յե արդեն...

Յեթե հայոց ազգը յուր կրոնը պահելով ֆաջ աշ-
խարհի յերեսին, այդ մասին շնորհակալություն մահ-
մետականության. սա բացասաբար պահպանեց հայերի
կրոնը: Ազգը վորչափ ևս թաղված լինել խավար տգի-
տության մեջ, այնուամենայնիվ, յեթե մի մասը գի-
տակցությամբ, մյուս և ավելի մեծ մասը, ֆանատիկո-
սությամբ հեռի ֆալով մահմետականութենից, պահեց
յուր կրոնը, հետևաբար և ազգությունը:

Թո՞ղ հայոց ազգը, իր թագավորության կործան-
ման որից, ստրկանար վորեւ քրիստոնյա կառավա-
րության, այն ժամանակ կտեսանեյինք... բայց ինչ-
պէս պիտի տեսանեյինք. վասն զի մեք ևս ծնելու
չեյինք վորպես հայ:

Անի քաղաքի կործանվելուց հետո հայերը Լեհաս-

առանձնապես զաղթեցին անազին բազմությամբ, յեթե նոցա-
նից մի մասը փրկվեցավ և այսօր հայրենիքի անուշը
կրում է յուր ճակատի վերա, շնորհակալություն Ղրի-
մի թաթարներին:

Իսկ մյուս և ավելի մեծ մասը, վոր քնաց Լեհաս-
տանում, ուր ե, յուրյան յեպիսկոպոսներով և քահա-
նաներով: Լեհաստանի մեջ մեր ճանապարհորդության
միջոցին (1859) շատ անգամ պատահեցավ մեզ տեսա-
նել հոյակապ, բայց այժմ ամայի, հայկական յեկեղե-
ցիք, իսկ հայ և վրչ մի հատ, լճի յեղան, ուր գնացին:

Հոգևորականությունը յուր աղայական խնդիրներով,
յեզուիտների ձեռքում գործիք դառնալով, ճղակտոր
հանեց ազգը, անդարձ կորուց նորան, հետևաբար և
ամենայն արդարությամբ ինքը ևս կորավ ու չքացավ
Լեհաստանից:

Յեթե հոգևորք ընդունակ եյին ազգը պահելու, ին-
չո՞ւ չպահեցին այս գաղթականությունը Յեզուական-
յի մեջ, ուր ավելի հնար կար լուսավորության: Ո՞վ
հանեց այն ազգակործան կռիվները, Մեդոլան, Մյունա-
տի՞ն, Նալբանդյանցը, Մովսես, Մելքիսեթ և Յեղիա-
ղար կաթողիկոսների կամ կիսասիրտ կամ թե ասել
յերկդեմի գործերը և ընթացքը, մյուս հոգևորների վա-
սակությունը, վորոնց մեջ Մեհրուժանյան պատկով փայ-
լում է Նիկոլ, չիք յեպիսկոպոսը, սոքա ամենը միասին,
վոմանք կամքով և գիտությամբ, իսկ վոմանք ակամա
և տգիտությամբ գործակից յեղան չուսու գաղթակա-
նությունը կորուստի անդունդը գլորելու:

Ո՞վ հայոց ազգը յուր շահաստացության և պատվա-
մոլության համար յերկրից յերկիր գաղթեցնելով մի
կեսին պատճառ յեղավ մահի, ողի և կյանքի հանգա-
մանքներին անսովորութենից, իսկ մյուս կեսին աղքա-

տության և ստրկության սանդուխքի ամենաբարձր
աստիճանին վերա վոտք կոխելու....

Այս բոլորը պատմական ֆակտեր լինելուց հետո,
գեոևս հոգևորականությունը պիտի պարծի թե անգ-
պահեց:

Մեր այս խոսքերը, հոգևորների ընդդեմ, չե վերա-
բերվում մեր տոնելի թարգմանիչներին կամ նոցա
հետևող փոքրագույն մասին:

Ինքյանք, այդ սուրբ թարգմանիչքը, աքսորվե-
ցան և հալածվեցան մինչև ի մահ ընդհանուր հոգևո-
րականության ձեռքով:

Խնկելի Խորենացին, այն հրեշտակ ծերունին չարա-
չար հալածվեցավ, վորին ի վերջո Բագրևանդի յե-
պիսկոպոսությունը վորպես մահադեղ տալով, անհան-
գիստ հալածանքով վախճանեցուցին և վոր, յուր վախ-
ճանի ժամանակ, անավոր նղովք գրեց հայոց կաթո-
ղիկոսի վերա:

Հայոց յեկեղեցականությունը և մահով չհաշվեցավ
այն պատկառելի ծերունու հետ. նորա վոսկերքը փո-
քեց հանեց գերեզմանից ու գետը թափեց:

Ղազար Փարպեցուն վոտքը բորիկ քեցին վանքից,
վոր, Մամիկոնյանց Տիրոջ Վահանի հանձնարարու-
թյամբ բարեկարգել եր, յուր սեպհական ունեցած չու-
նեցածը ծախելով: Վանքից հալածելու ժամանակ, նո-
ւա բոլոր ինչքը հափշտակեցին, նաև հունարեն գիր-
քերը, թեև մարդ չկար վանքում հունարեն կարդացող:

Խոսքովիկը գեոևս Հայաստան չմտած, յերբ լսե-
ցին, թե գալիս ե, փրփրեցան նախանձով և վառեցին
բորբոքեցին յուրյանց հալածանքը, մինչև վոր հայ-
րենիքի անձուկով այրված տոչորված յերիտասարդը,
վոր աշխարհից աշխարհ գնացել եր բան ուսանելու,

աղգը լուսավորելու համար, լսելով այս մահաձայն աղեղ-
ների դռնչուենքը, աղթեց առ տեր և վճարեց յուր
կյանքը, վորի և վոսկերքը ոտարք և վոչ մեք արժանի
յեղանք ընդունելու:

Մորենացու տգիտահալած մատյանները փաթաղիկեա
անունով հռչակեցին, իսկ Ղազար Փարպեցին՝ աղան-
դավոր:

Փարպեցին, այս բոլոր մանրամասն պատմելուց հե-
տո* գեղեցիկ նկարագրում և հայոց յեկեղեցականու-
թյունը, նաև հինգերորդ դարում, յերբ բան և լուսա-
վորության մասին:

«Առ դառնաշուենչ նախանձու իւրեանց, որ բունեալ
է 'ի նոսա... պատատեալ և քողարկեալ երեսօք նստին,
որպէս առ հոտեալ դիական, պապանձեալ իրբն զհամբ
դե»:

Այս տխուր պատմություններէց հետո, մեր գեմքը
դարձնում ենք դեպի կրօնական ժողովը և իբրև ան-
դամ ազգի և յեկեղեցու, առաջարկում ենք նախ, հաս-
կանալ և ընդունիլ, վոր հոգևորականությունը մի տե-
սակ արհեստ չէ նյութական կյանքի պիտույքը հայ-
թայթելու համար և թե կամի նա խորհուրդ ունենալ,
ապա ուրեմն պարտական և սպասավորել ազգի հառա-
ջագիւմության:

Յերկրորդ, նույնը հասկացնել յուր իրավասության

* Թուղթ Ղազարայ Փարպեցու, առ Վահան Տէրն Մամի-
կոնէից, տպեալի Մոսկուա, 1853. աշխատութեամբ և քննութեամբ
պ. Էմինի: Յավում ենք, վոր մեր հետ չունինք այդ գիրքը, վոր-
պեսզի մի յերկու և՛ կարող լինելինք արտագրել այստեղ պ.
Զամոսեճյանի և յեկեղեցականների հոգևոր միութեամբ յայն
համար:

տակ յեղած յեկեղեցականներին, վորպեսզի յուրյանց
ընթացքը հարմարեցնեն այս գաղափարին:

Յերկրորդ, սաստիկ պատվեր տալ բոլոր յեկեղե-
ցականներին, առանց աստիճանի և պաշտոնի խտրու-
թյան, չհամարձակվիլ ձեռք վերցնել կամ դավադան
բարձրացնել հայոց ազգի զավակները զանաւործելու և
գիշատելու համար. (տես Մեղու թ. 127) այդ հոգևորա-
կանություն չէ, այլ անարգ դահմաբոյն*:

Այս առաջարկությունը առնելուց հետո, կրտսա-
սենք կրօնական ժողովի շրջաբերական հրամանին,

* Մեր այդ ժպիրճ ընթացքը հոգևորների նկատեցինք նաև
եջմիածնի մեջ (1860. հոկտեմբեր): Մի առաւմտ, սենեկին առա-
ջիւր բարձրացած սաստիկ աղմուկից և աղաղակից ստիպված դուրս
յեկա պատճառը իմանալու համար: Յավելով տեսա, վոր յերկու
ժախտաբար արեղայք ձեծել են տալիս մի քանի հայ մշակներ,
այն պատճառով, վոր այդ մարդիկը առանց կերակրի մնալու պայ-
մանով չկամեցին աշխատել ձեռք և անպաշտպան հայերի ունեւոր-
բաւական վայտ իջուցանելուց հետո, յերեկ թե այս հայկական ինկ-
վիզիտորները կրքը չէր նստել, վորովհետև նոցանից մինը Կա-
րապետ անուն, անպատկառապես և միանգամայն կատաղած ինքը
սկսեց աքացի և բռնցի ջարդել, արդեն գիշատվածներէից, մի
խեղճ պատանի: Քիթը բերանը արյունաթաթաւ, մազապուր փա-
խով դահճի ձեռքից վողորմելի պատանին և վազելով սյունհո-
ղոսի անդամ, սրբազան Յեղիազար յեպիսկոպոսի մոտ, բողոքեց
յեղած անիրաւութենից: Յեպիսկոպոսը, անձամբ անձին տեսա-
նելով վողորմելու վերաւոր կերպարանքը, յուր հետ առաւ
այս արյունով մկրտվածը, (վորին, Կարապետը յեղել էր և մկրտիչ)
և զնայ վեհափառ կաթողիկոսի առաջև վկայելու այս անորենու-
թյանը: Զախողակի, նորին վեհափառությունը հիվանդ լինելով,
հետեաբար չկարողանալով մարդ ընդունել, յեպիսկոպոսը հարկա-
զըվեցավ, վորպես սյունհողոսի անդամ, պաշտոնական թղթով պրո-
կուրորին բողոքել և խնդրել արժանի անորենություն, վոր վանա-
կանը չհամարձակվին դիմել դեպի այսպիսի հնարներ: Թե ինչ հե-
տեանք ունեցավ այդ բողոքը, դեռ ևս չունինք տեղեկություն:

հատկապես այս բովանդակութեամբ, վոր յեկեղեցականք չհամարձակվին վորեկիցե դիպվածում, մարմնավոր պատիժ գործ դնել աղգի անդամների վերա:

Յեթե այս շրջաբերականը գուրս չգա, այն ժամանակ (այժմէն հայտնում ենք հրապարակով), վոր մեք կըհանենք մի շրջաբերական, բայց բոլորովին հակառակ բովանդակութեամբ: Նորանից ծագելու հետեանքը, հանցանքը և մեղքը այս օրից, դնելով կրօնական ժողովի գանցառութեան վերա:

Այս խոսքերը ասում ենք ամենայն լրջութեամբ և ծանրութեամբ: Կրօնական ժողովը լոկ սպառնալիք չըհամարե կամ բողոքական վաղանցուկ կըքի ծնունդ, վնչ, վնչ: Այժմ և մինչև մեր գերեզմանի ավը վրեժխնդիր և նախանձավոր ենք հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու և այս խորհրդով ամենայն բանի ընդունակ:

Կրօնական ժողովը կըկարգա մեր շրջաբերականը, յեթե գանցառութեան դժբաղդութեան հանդիպի. մեք, յուր ժամանակին, առանձին ծրարի մեջ կուղարկենք նորան մի օրինակ:

Վնչ, ինչ ցավալի պաշտոններ, ինչ տխուր առարկաներ նյութ են այսօր մեր խոսքին:

Այս եր մեր գործը:

Արշուն և կաթում մեր սրտից, յերբ նայում ենք աղգի ամայի և ամուլ կյանքի վերա, օղբարշ սըրտմըտում ենք դարձյալ, տեսնելով, վոր այս անգործութեան, ծայրացյալ թշվառութեան և կարելի չեղածի չափ ստրկութեան մեջ, հայերը դատապարտված են ոտաբի գավազանի հետ, յենթարկվիլ նաև յուր յեկեղեցականների հարստահարութեան:

Բայց մինչև վոր աստիճան բարձրանում և այս

անախորժ զգացողութեանը, մինչև հայ մարդիկ, դարձյալ, հանդես են գալիս յեկեղեցականներին մտացածին իրավունքը ջատագովելու և աղգի ստրկութեան ժամանակը հարատեկ տալու համար. մինչև վոր աստիճան... մեք հրաժարվում ենք սահմանել:

Ազատութեանը, այն վսեմական արտոնականը, վերստին և վերստին սըրված արշունով, հրաբորբոք տառերով դրվում և պայծառ ճակատների վերա, իսկ հայը և այսօր չե կարող կատարելապես գուրս հանել յուր ճակատը սև վերարկուի տակից, ուր դարերով անա վորջացել են Պարկյանք, ազատութեան բողոքները մկրատելու համար:

Մինչև այժմ վերացականութեամբ ապրեցանք, վոր, ուրիշ խոսքերով, ասել և մեռանք, միթե պետք չեր մի փոքր կյանքի վերա ևս մտածել...

Տարիները վազում են փայլակի շուտութեամբ, որերը թռչում են, վորպես մի վայրկյան: Վախենում ենք և իրավունք ունինք վախենալու, թե մի գուցե, մինչև հայը կշտանա յուր մահանման քնից, լուսինը անդնդասույղ դնա հորիզոնից ներքև...

Շատ աղգեր պատահեցան անբաղդութեան, բայց այդ չեղավ նոցա համար հավիտենական մեռելութեան:

Աքսորվեցան, կախվեցան, գլխատվեցան և այրվեցան, բայց նոցա հոգին կենդանի մնաց, յուրյանց ամայացած հայրենիքի փլատակների մեջ:

Հայրենիքի ողբ, սարերը և անտառները խոր գիշերի լռութեան մեջ, դարերով շնչեցին այդ նահատակների վերջին բողոքում արած բողոքների արձագանքը:

Յեղո՛ւկ ձեզ, Հայաստանի սարեր, Հայաստանի ձո-

բեր և Հայաստանի նվիրակած անտառներ: Այրարատից մինչև Տորոս, սախաված եք դուք հնչեցնել միայն, հեկեկանքը և հոնդյունքը Հայաստանի վորը զավակնելի հարստահարողների և յեկեղեցականների զավազանի տակից:

Ուրիշ ազգերի նահատակների ուրվականքը հալածեցին հարստահարողներին կյանքը, մինչև մի ժամանակ, իսկ յերբ մինչև բերանը լցված եր փորձության բաժակը, այնուհետև նոցա սգազգեստ ժառանգներին վերադրուհներին տակից դուրս շողացին պողովատիկները:

Նոքա ազրեցան և քրտնեցան ընդհանուրի ոգտի համար. լավ հասկացած լինելով, թե սնու և մասնավորի քաջարողութիւնը, առանց ընդհանուրի յերջանութիւն:

Նոքա չկաշառվեցան ոտարներից... Նոքա չնենգեցին յուրյանց ազգին, Նոքա չվաճառեցին յուրյանց գրիչը... Նոքա արհամարհեցին ոտարի տված պատիվը և աշխատեցան դժպիսի պատվանշանների տեղ կրել յուրյանց ազգության անունը, այլ և վերքերի սպիք, վորոնց արժանացել եյին մարտիրոսութեամբ, ազգի ազատության անունով:

Ի՛նչ քնաց մեզ մեր անցած որերից, ի՛նչ վիճակի մեջ ենք ներկայումս, ի՛նչ ճանապարհ ե մեր գնացածը և ո՛ր ե դուրս յեկքը:

Մոքա յեն ահա խնդիրքը, վոր ամենայն բանական հայ պարտական և լուսափայլ կացուցանել ազգի ընդհանրութեան տուջն:

Հոութիւն... Պատվելի Այվազովսքին մեր մինչև այժմ գրածների համար ևս պատրաստվում ե հերետիկոս անունով մեզ վերստին մկրտելու:

Բայց վորովհետև մեք յերկյուղ չունինք անունից,

ուստի և ընդունում ենք նաև պ. Այվազովսքիի սպառնալիքը, Մասյաց Աղավնու մեջ քննութեան տակ ձգել Հյուսիսափայլը, սկզբից մինչև նորա վերջը* և հանդիմանել նորա հերետիկոսականութիւնը:

Հրավիրում ենք, վոր ասպարեզ իջանեք**, բայց յեթե բանը կրոնի և սրտի վկայութեան վերա անհաստատութեան դա, կարծում ենք, թե ավելի ծանր լինի յուր պատասխանատվութիւնը, մանավանդ յեթե գլխովին մարդիկ, վոր հանձն առնուն հրատարակել պ. Այ-

* Հյուսիսափայլը, գուցե պ. Այվազովսքիի յերեակայութեան մեջ խախտված, շարունակվում ե այսուր:

** Այս հրավերը առնում ենք պ. Այվազովսքիին, մինչ արդեն նախընթաց տարիներում քանի անգամ ամբաստանվեցանք նորանից Ռուսիո ներքին դրժոց մինխտրի առաջ, վորպես անկրճի, վորպես անբարոյական, վորպես ապստամբ և խռովեցուցիչ ժողովըրդայն: Պ. Այվազովսքին առաջարկում եր քաջափայլ մինխտրին, Հյուսիսափայլ վնասակար որակերը դադարեցնել և մեզ ձգել սասանիկ պատժի տակ, որենք ընդունակ խտտութեամբ: Գուցե պ. Այվազովսքին հայրական հոգովութեամբ պատրաստել եր մեզ տեղի բնակչութեան ներչինակ կամ Կրասնոյարսկ... Մեր ջերմութիւնը մի փոքր բարեխառնելու համար Միլիերի սառնամանիքը... (բուն առողջապահական խորհրդով): Պ. Այվազովսքին չե կարող ուրանալ այս իրողութիւնքը. ըստ վորում յերկար քննութիւնք ե զրազրութիւնք յեղան մինխտրերի և ցենզուրյան ժողովի մեջ, այլև առաջարկվեցան հարցմունքներ...

Չնայելով այս տխուր անցածի վերա, չնայելով վեր պ. Այվազովսքին յուր Մասյաց Աղավնու մեջ ազատ ե ամենայն բան զրեւու, նաև զրաբարեւու... նաև հայոցիւր, ըստ վորում նորա զրվածքը չեն քննվում ցենզուրյան ժողովի մեջ, մյուս կողմից մեր բոլոր զրվածքը քննվում են և մանավանդ խիստ, յեթե հարաբերութիւն ունին պ. Այվազովսքին (ապացույցները մեր ձեռքում պակաս չեն), չնայելով ասում ենք այս բոլորի վերա հրավիրում ենք, վոր պ. Այվազովսքին խոսքը բռնե ու հրապարակ իջանե:

վազուվազելի ընթացքի և գործերի պատմութիւնը* այն բոլորէից, ուր դադարում և Վ. Հայր Սարգսի Մուրաթյան վարժարանի պատմութեան յերկրորդ հատորը;

* Այդ հրատարակվելու պատմութենից, առ այժմ, մի փոքր ճաշակ տալու համար ընթերցող հասարակութեան, դնում ենք այստեղ պ. Այվազուվազելի վեց նամակները պատճենը, վերոնց բնագիրը գտնվում և Վենետիկ, Ղազարու վանքը:

Անշուշտ, այս նամակները մի նոր լույս պիտի ծախվեն պ. Այվազուվազելի խիստ բարոյականութեան վերա, մանավանդ յեթե հիշենք յուր ասածները, ի Յայտարարութեան անցից Մուրատեան վարժարանին թե հ. Սարգիսը յուր վերաշարժեց վանքի բարկութիւնը, պ. Այվազուվազելին պաշտպան կալով, Հոռովի և վանքին ընդդէմ: Պ. Այվազուվազելի տպագրութեամբ անընտելանելի հռչակված հ. Սարգիսը, մինչդեռ պատերազմում էր պ. Այվազուվազելի ոգտի համար, սա գրում էր Աբրալին հետեւյալ նամակները, վերոնց մեջ բացի քրիստոնեայականից, բարոյականից և մարդասիրականից ուրիշ սկզբունք չգտանք:

ԱՌԱՅՐԱՅՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱՐԱՆՈՒԹԵԱՆ Ի ՎԵՆԵՏԻԿ

Փարիզ, 18 նոյեմբերի 1848.

Աստուածապատիւ Հոգեւոր Տէր.

...Վ. Ստեփանոս արդ հասեալ իսկ իցէ այդր, զի ըստ գրելոյ իւրոյ առ Հ. Յովնանէս յՑ սորին ամսոյ մեկնելոց էր նա ի Լիվոռնոյէ: Ի նմանէ տեղեկացեալ իցէ տէրդ և բազում ինչ իրաց Վարժարանիս և խելամուտ լեալ, թէ հրշափ վայրապար գանդիտեաց ժողովս մեր երկիցս անգամ յընդունելոյ դժբաժնաթաւ մատար տեսչին, (Հ. Սարգսին Թէոդորեան) և որպէս յանգուտըս, մանաւանդ թէ ի վնասս ևս իրաց Վարժարանիս, յանձնաւարար ի նա ընդ տեսչութեանն և զանուն մատակարարութեան գրամոց: Եւ արդ եթէ գեղեալսն չիցէ խոհեմութիւն փոփոխել, առանց կարեւոր ինչ պատճառաց, սակայն թուի ինձ թէ զարժանն պատասխանի առ գրեալսն ի նմանէ (զորս ընթերցաւ ինձ) պարտ է կշռել աներկիւղ և անպատրուակ բանիւք և անթափելի փառաբեր...

Ն. Ծ. Հ. ԳԱՅՐԻԻՆԷՆ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ

Վոր դուցի մինչև այս տարու վերջը հրատարակվի: Վահ, ինչ պատմութիւն...

Ավիլի դուքին պիտի լինեն պ. Այվազուվազելին Հայր-

Փարիզ, 17 դեկտեմբեր 1848.

...Մի ինչ միայն Գեր. Տէր, որ փոքր մի տաղնապէ գմիտս իմ, այն է, զի առ հարկի ալժմու հանգամանաց Վարժարանիս, ինձ անկէ ուղղակի պատասխանատու լինել առաջի միաբանութեանս ոչ միայն զպատիարակութենէ և զհրահանգաց մանկուտոյն, այլ զրեա թե և զընթացից Վարժարանիս առ հասարակ. ուր եթէ կայր ոք տեսուչ արդեամբ և ոչ անուամբ լուրով որպէս զարգին (Հ. Սարգիսն) իմ պատասխանատուութիւն ընդ նորա ձեռն լինել և զհանրական տեսչութենէ Վարժարանիս նա տայր պատասխանի... Սմին իրի և զամենայն հոգս պիտոյից մանկուտոյն, զկերակոց, ասեմ և զզգեստուց և զզրոց և որ այլն ևս, իմ յանձին կալեալ է, թէպէտ և զբամոց մատակարարութիւն լի բովանդակ ձեռս Վ. Հ. Յովնանէսու կայ: Զայսուսիկ հարկ համաբեցայ զեկուցանել Վենիզ, զի ի վերջոյ ուսեալ կարծեմ, թէ որ անուանեալ տեսուչն է Վարժարանիս պատճառանս խնդրէ անմեղադիր առնելոյ զիւրն անգործութիւն, և զանկարողութիւն զմեօք արդեօք և զՁեօք մանաւանդ արկանելով դամենայն զվնասս սակաւ զարգացման վարժարանիս, (ըստ իւրոցն ինկաց):

Ն. Ծ. Հ. ԳԱՅՐԻԻՆԷՆ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ

Փարիզ, 19 յունուար 1849.

Վ. Հ. Սարգիս մեծաւ անհամբերութեամբ թուի սպասել այսի թղթոյ, յորմէ իմանամք, թէ աւուրբք յառաջ գրեալ է առ Ձեզ. անշուշտ նամակ ըստ ոճոյ առաջնոց նամակացն իցէ և այդ որպէս գուշակեմ, իմ տենջ այն է, զի մի բնաւ խռովեալ իմ խոհական խորհրդով և ազգու պատճառաբանութեամբ կշռիցէք նմա զպատասխանին, ըստ իմաստութեան Ձերում:

Ն. Ծ. Հ. ԳԱՅՐԻԻՆԷՆ ԱՅՎԱԶՈՎՍՔԻ

Յ. Գ. Արդ իսկ կոչեցայ ի Վ. Հ. Յովնանէն ի սենեակ Վ. Հ. Սարգսի և տարեալ և ցուցեալ էր սորա նմա զմանրամասն հաշիւ ամենայն ելից և մտից Վարժարանիս, հանդերձ առանձին բո-

սխալփայլի մի ուրիշ բանի վերա հարձակվիլ, քան թե դատապարտել նորան վորպես կրոնադրուծ:

Յեվ ո՞վ է այս դատապարտողը, վոր արդեն յերկու

վանդակութեամբն և կշռով և ընդունելութեան մուրհակօք: Վ. Հ. Յովհաննէս ընթերցաւ և բացատրեաց մի առ մի զկարեւորագոյնս ի հատուածոցն, և ապա ասէր—Ահա և հաշուեմատեանս ողջոյն, տեսէք, քննեցէք և ըստ այնմ գրեցէք առ Գեր. Աբբ. և յղեցէք զըսվանդակութիւնդ: Վ. Հ. Սարգիս հարեանցի և եթ ակն արկեալ ի մատեանն ասէ, զայդ առ քեզ կաջիւր և զհամառօտութիւնն տուր ինձ զի յղեցից ի Վանս: Յաւել Վ. Հ. Յովհաննէս. բայց կամիմ գիտել, թէ ո՞ր կաջիւր զհաշիւս այսր նորոյ տարւոյս, զի ես ոչ ես կարեմ վարել զպաշտօն, զոր հասարակութիւնն առեալ է յինչն. իմ պաշտօնս այսուհետեւ խոստովանահայրութիւն և եթ և: Ասէ Վ. Հ. Սարգիսն, ոչ ոչ. կալ գու զհաշիւն դարձեալ, որպէս յառաջ մինչև տեսից թէ զինչ պատասխանի եկեացէ ի վանաց առ թուղթսն իմեւ Վ. Հ. Յովհաննէս եւ ընդ իս ի սենեկէն նեղապրտեալ ընդ մէջ դամեալ գնացս առնն: Իսկ հաշուեմատեանն զոր տեսի, ամենայն մանր մանր տեղեկութեամբ հանդերձ գրեալ է, որպիսի ոչ զվանացն տեսեալ է իմ և ոչ Ռաֆայէլեան Վարժարանին, զի, օրինակ իմն և անուանք իւրաքանչիւր մատենից զնկոյց, մի առ մի զրօշմեալ են ի նմա, որպէս և այլ պաշարք և նիւթք լիպրէիւքն և հափովք և թւովք ըստ մուրհակացն ընդունելութեան նշանակեալ մի ըստ միով: Տեսցուք եթէ Վ. Հ. Սարգիս արասցէ՞ նոյն պէս (եթէ ի ձեռս նորա մնասցէ հաշուեմատեանն) որպէս յոխորտայ ի լինել խօսից...

Ն. Ծ. Հ. ԳԱՅՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԻ

Փարիզ, 29 յունուարի 1849.

Ձերոքեան ի Վեհեգ ի 17 ամսոյս՝ ընկալաք յերեկն հանդերձ օրինակաւ թղթոյն (Հ. Սարգիսն), որո իմաստք ոչինչ անձանօթ էին մեզ...գտեալ զայն անձնակաւ և անարժան կրիւք անիմանալի խառնախօսութեամբ և յանդուգն ասացուածովք: Զոմանս յառաջարկութեանց նորա, որ իրաւացի թուին և մեզ գիտեմք, զի և միաբանութիւնս ճգնի տակաւարդիւնացուցանել ըստ կարի և ըստ ներելոյ ժամանակիս, և զոմանս

անգամ վտիւել ե յուր կրոնը, վոր տպագրութեամբ հրատարակել և «Կաթոլիկ ծնած եմ և կաթոլիկ պիտի մեռանիմ», վոր Տատյան Պողոս բեյին համար տետ-

յորոց մի է և յանձն առնել զտեսչութիւն վարժարանիս ի ձեռս գաղղիացւոյ ուրուք, ոչ միայն համարիմք, ի նախատինս ուխտիս, որպէս ասէ նա, այլ և ի վնաս մեծ վարժարանիս և ազգային կրթութեան, զորոյ զօրինակն բռնիմք և ի վերայ զպրոցին Լազարեանց՝ ամին իրի և անգործադրելի ամենեկն—Իսկ թէ զինչ պատասխանի արժան իցէ գրել առ նա, մեր կարծիք այս են... խալտառակել միանգամայն զդնացս նորայիւր վարժարանիս, ոչ միայն յերկուց ամաց հետէ, այլ և անդատին յամէն, յորում կարգեցաւ նա ուղղիւ Ռաֆայէլեան վարժարանին և ապա այսմ թ Պատաւիոն Բայց քանզի այլ է սա անխիղճ և կատաղի, լաւ ևս թուի զընդ առ նա պատասխանի զդուշաւոր բանիւք... (թէ) բարեոք թուեցաւ մեզ և ժողովոյս զի որովհետեւ ինձ անմարթ է վասն հանգամանաց ժամանակիս գալայիւր, Վերապառուութիւնդ ի մեղմանալ օրոց փութացել անյապաղ գալ այսր ի Վեհեգիւ... եթէ յանձն առնուցու նա գալ, բարեք է, զի և վարժարանս զերծանի միանգամ ի տարտամ տեսչութեան աստի որով սա զանուէն և եթ տեսչի՝ ունելով զամենայն պատասխանատուութիւն յանձնէ ի բաց քերէ, որպէս միշտն և միանգամայն թշնամութեան աչօք հայեւով միշտ և յանպարտաւ ընթացս վարժարանիս, և անդադար հակառակութեամբն ընդ վանացն ջլատէ զձեռս վաստակաւորաց: Իսկ եթէ յապաղելով զյուն (որպէս հաւանական թուի)՝ չկամիցի ելանել աստի, գէթ չկարէ այլ ևս յայտնապէս քրթմնջել ոչ առ մեզ և ոչ առ Ձեզ...

Ն. Ծ. Հ. ԳԱՅՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԻ

Փարիզ, 19 մարտի 1849.

...Զազդեցութիւն գրոյն Ձերոյ առ նա չկարեմք հաւատաւոր գուշակել, զայս տեսնեմք և իմանամք զի ուրախ է նա և աւելի ևս քան զսովորականն, և պատրաստէ զարձեալ պատասխանի,

լրակ դրեւով ներկայացել և Փարիզի արքեպիսկոպոսին, հայոց յեկեղեցին հռովմեյական խոստովանելու համար, վոր հանգամանքներն և հուշներն ընտաղատված վազել և դեպի հայոց յեկեղեցու, վոչ յերբեք փակված, զիբը և վոր, ավելին ասեմ, լուսավորչական հայերի

որպէս թերեւս զուշակէիքն ընդ մեզ. ոչինչ անգիտանալով զանհանգարտ և զկռուտանէր բարս նորա և զդատարկ ապրտ շատ խօսութիւն: Բարեք յոյժ և իմաստութեամբ գրեալ էր Զեր զթուղթն ըստ ամենայն մասանցն. բայց զարմացաք յոյժ, թէ ընդէ՞ր ոչ իշխեաց և ոչ կամեցաւ արգոյ ժողովն երկաղ ինչ յիշատակ առնել ի թղթին դյանձնելոյ նորին զարձեալ գամենայն զգործ և զմատակարարութիւն վարժարանիս ի ձեռս Վ. Հ. Յովհաննու, և զհրաժարական բանիցն զորս ստեպ կրկնէ նա ի թուղթս իւր: Գիտեմք իսկ զի վրիպակ մեծ էր դոր գործեաց ժողովդ մեք, տալովն ի ձեռս Հայր Սարգսի զամենայն իշխանութիւն տեսչութեան և գործակալութեան, ընդդէմ իսկ իւրոյ և ճանաչման իւրացն, գիտելով չափ զողորմելի անկարողութիւն և զխռովարար բարս անգործ առնն բայց քանզի նա հրաժարեաց կամակար ի յանձնառութենէ գործոյն, ժողովդ յիմ լուիցէ.... Յայսմ ամենայնի միութարութիւն մեծ է ինձ, զի այս կռիւք և խռովութիւնք (որ թուի թէ ոչ դադարեցին իսկ մինչև իսպառ այսպիսի հնարեք) ոչինչ բնաւ ամենին խափան լինին ներքին բարեկարգութեան և յառաջագիմութեան վարժարանիս գլխովին...

Ն. Ծ. Հ. ԳԱՅՐԻՆԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԳԻ

....Վ. Հ. Սարգիս թուի թէ չեւս աւարտեալ է գերդասին թուղթս իւր բազմիջեանս, զորս անձանձրոյթ համբերութեամբ գրէ, որպէս կարծեմ, յայգուէ մինչև ցընդերեկս. զի յետ վերձառութեան լրագրոց, զուարճութիւն մեծ թուի նմա և գործ կարեւոր վիճաբանել ընդ մեծի և ընդ փոքր և զհնոտի խընդրոց և զանցելոց սուտ կամ սնոտի վարկածից. բայց ընդ մեզ (գէթ առ երեսս) բարեք վարի...

Ն. Ծ. Հ. ԳԱՅՐԻՆԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԳԻ

առաջնորդ կարգվելուց հետո հրատարակել և, հայոց յեկեղեցու հակառակ Վարդապետարա՞ն քրիստոնէյական հավատո՞ւ:

Այս Վարդապետարանի վերա յեր գրել պ. Եմինը յուր ոռեսերեն քննությունը, վոր պ. Այվազովսքին Մապյաց Աղավնու մեջ հիշատակում է, թե մի ոռեսերեն ձեռագիր տետրակ, յուր ընդդեմ գրված ման և գալիս ժողովրդի մեջ:

Այս Վարդապետարանն եր, վոր Ռուսաիո ներքին գործոց քաջամայլ մինիստրի ձեռքով դատապարտվեցավ: Պ. Այվազովսքին չե կարող հակառակը պնդել:

* Այս վարդապետարանը, ինչպես վկայում է պ. Այվազովսքին, Պոլսի նախկին պատրիարք սրբազան Հակոբոս արքեպիսկոպոսի և կրօնական ժողովի հրամանով ե տպված: Յեթե ստույգ է այս, ապա ուրեմն կրօնական ժողովը անընդունակ և նաև դավաճանական խնդիրները վճռելու, վոր մի փոքր հառաջ նորան եյինք վերագրում: Բայց մի բան տարակուսեցնում է մեզ: Պ. Այվազովսքին հրատարակեց յուր շրջաբերականի մեջ, թե հայոց յեկեղեցու ընդդեմ տպված բոլոր կտորները տպագրության սխալանք են. ասել է թե պ. Ճանիկ Արամյանը յուրյանից է շարադրել այն բոլորը: Պատճառ, տպագրության սխալ կարող է լինել տառի կամ շատ շատ մի բառի մեջ, իսկ գրաշարը, վորչափ ևս անփորձ լինի յուր գործին, այնուամենայնիվ, չե կարող յուրանից քերազրել եջեր, շարել և տպեր Այս յեթե մի մերկ գրուպարություն է, թո՞ղ պ. Ճանիկ Արամյանը հոգա և բողոքե, մեք այս մասին փուլթ չունինք, բայց այսչափ միայն պարտական ենք ասել ճշմարտության համար, վոր յեթե գերբը դատապարտվելուց հետո խոստովանեցավ նորա սխալականությունը, ուր եր նորա ուղը, յերբ տպված ստանում եր Փարիզից և տալիս եր դեպրոցի աշակերտների ձեռք. չկարգաց, չտեսնվ: Յեվ հայոց յեկեղեցու հրապարակյալ անհարազատը Հյուսիսիսափայլի գրեչնեք պիտի կրոնագրում քարոզի: Հերավի, մինչև ի կատակ բարձրանում է սորա ծայրը:

ըստ վորում յուր սեպհական ձեռնագրով, պ. մինխտորի հրամանին համաձայն, առաջարկություն դրեց թեմական ատենին, վոր սա շրջաբերական հրամաններ տա-
րածե բոլոր վաճառված վարդապետարանքը հետ առ-
նելու և յուրյան հասուցանելու համար, ըստ վորում
այսպես եր քաջափայլ մինխտորի հրամանը:

Այս վարդապետարանն եր, վորի վերա մեր գրած
բազմիշյան քննությունը ընդհանուր հայոց վեհա-
փառ կաթողիկոսը ընդունելով, շնորհեց մեզ յուր որհ-
նության կոնդակը, վորի մեջ «խարդախամիտ գրված,
մոլորական բան և հավետ գայթակղեցուցիչ պարզա-
մատց» անվանում ե պ. Այվազովսքիի վարդապետա-
րանը*:

Այս վարդապետարանն եր դարձյալ, վոր, առանց
նորա դատապարտությունը, քաջափայլ մինխտորի կող-
մից, հիշելու, պ. Այվազովսքին, ազալնեյական պար-
զամտությամբ, ուղարկեց վեհափառ կաթողիկոսին, վե-
րբստին տպելու հրաման խնդրելով: Պատճառում եր յուր
նամակի մեջ, թե բոլոր տպվածքը վաճառված լինե-
լով կարոտություն կա վերստին տպելու: Հույս ու-

* Յերբ 1860 թվականի հոկտեմբերի մեջ, ազգային գործե-
րով գտնվում էյինք Եջմիածին, վեհափառ հայրապետը, վերստին
շնորհելով մեզ յուր որհնությունը, հայտնեց, թե պ. Այվազովս-
քին, յուր «Վ ա ռ ք Յ ի ս ու ս ի» ասված գրքի թարգմանության
մեջ, հակառակ ե խոսում հայոց յեկեղեցու վարդապետության,
ուստի և նորին վեհափառությունը քննում ե և նշանակում ե ասո-
ցյալ գրքի այն տեղերը:

Պ. Այվազովսքիի դեպի հայոց յեկեղեցին ունեցած հարաբե-
րությունը, վեհափառ կաթողիկոսը, պաշտոնական թղթով հայտ-
նած ե Ռուսիո տերության: Յեթե պ. Այվազովսքիի գրելիք
քննության պատասխանելու հարկին հանդիպինք, գեթ առիթ կու-
նենանք այդ թղթերը և այլ կոնդակներ հանդես հանելու...

ներ նա, վոր վեհափառ կաթողիկոսը, թերեա առանց
կարգալու, հրաման կըտա և ինքը հետո, կաթողիկո-
սական ստորագրությամբ, կարող կըլինի դատապարտ-
վածը վորպես արգարացած վերստին հրատարակելու:

Բայց այլապես յեղավ բանի վախճանը: Վեհափառ
կաթողիկոսը ընթերցավ, քննեց և, գտանելով սխալա-
կան և հայոց յեկեղեցու վարդապետության հակառակ,
արգելեց: Այս իրողության մասին մեզ պատմել և նույն
ինքը ամենայն հայոց վեհափառ կաթողիկոսը:

Ահավասիկ մեր լինելոց քննիչը, ահավասիկ պ.
Այվազովսքին, ըստ մասին: Յեվ միթե այս անարատ
մարդը, (վորի բարոյականության և մինչև այժմ ու-
նեցած ընթացքի վերա վոչ վոք համարձակություն
չունի արատ շիւղ), իրավունք չունի, յուր անսխալա-
կան քննությամբ, յուր հակառակորդը դատապարտել,
մանավանդ յեթե նոցա հայացքը ոգտակար չեյին ին-
քյան: Թող հ. Սարգսի համար Աբբային գրած նամակ-
ները վկայեն...

Թեև մարգարե չենք, բայց ընթերցող հասարակու-
թյան, այժմին գուշակում ենք պ. Այվազովսքիի ասե-
լիքը այս նամակների մասին: Այն ժամանակ նա չե
ճանաչում յեղած հ. Սարգսին և հետո, ճանաչելով, ի
Յայտարարութեան անցից Մուրատեան վարժարանին,
հռչակել և նորա իրավունքը:

— Յեվ այսպես.

«Պ. Այվազովսքին Ռամանյան պատմության մեջ հա-
յոց ազգը հերձվածող և գանչում»:

— Այգտեղ նա մեղավոր չե, առանց նորա կամքին,
վանքը հավելացուցել և այդ եջերը*:

* Պատմութիւն վերադարձի երկց վարդապե-
տաց:

«Պ. Այվազովսքին ինչի՞ համար ընդունեց»:

— Ո՛վ է այդ հարցնողը:

(Պ. Այվազովսքին պատասխանում է) «Մի հերե-տիկոս»:

— Քրիստոնեյական հավատո Վարդապետարանի մեջ, պ. Այվազովսքին հակառակում է բուն հայոց յի-կեղեցու վարդապետութեան:

«Տպագրութեան սխալանք են. գրաշարը շարագրել է այն բոլոր կտորները»:

— Վի՛հ, պարոն, հեղինակի ձեռագիրը, վոր կա տը-պարանի մեջ, վկայում է, թե գրաշարը և վոչ անգամ մի տառ փոխած է. ուստի տպագրութեան վերա հան-ցանք դնելը զրպարտութիւնն է:

«Ո՛վ է այդ հետախույզը»:

(Պ. Այվազովսքին պատասխանում է) — Մի անհա-վատ:

«Վ. հ. Սարգիսը յուր պաշտոնից ձգելու համար, պ. Այվազովսքին գրում է Արքային լրտեսական նամակ-ներ»:

— Այդ նամակները գրելու ժամանակ նա չէր ճա-նաչում հ. Սարգիսի արժանավորութիւնը**:

«Անարժանութիւնը ինչպե՞ս եր ճանաչել»:

— Ո՛վ է այդ քննիչը:

(Պ. Այվազովսքին պատասխանում է) «Մի անբա-րոյական մարդ»:

— Պ. Այվազովսքին յուր դպրոցի կանոնների մեջ (§34) գնում է, «թե վոր մեկը պատիժ կընդունի, ա-ռաջ պիտի կատարե գայն և հետո, թե վոր ասելիք մը ունի, տեսչին հասկցնե»:

* Պ. Այվազովսքին շրջաբերականի մեջ:

** Պ. Այվազովսքի տալու պատասխանը:

«Պատիժը կրելուց հետո արդարանալու ոգուտը ի՛նչ է»:

— Այդ կանոնը կատարվելու համար գրված չէ, ուստի և վոչ կիրառական*:

«Չկատարվելու կանոնը ինչ պատճառով է ստվում»:

— Ո՛վ է այդ իրավաբանը:

(Պ. Այվազովսքին պատասխանում է) «Մի ապս-տամբ մարդ»:

«Իրավունք թույ՞ւց պ. Այվազովսքին այսուհետև յուր գործերին կամ գրածին հավատարու...»

— Անտարակիւյս:

«Ի՞նչպե՞ս թե անտարակիւյս. հունվարի ասածից հրաժարվում է փետրվարին, մի տարի հառաջ գրված քանից հրաժարվում է ներկայումս»:

— Սեղճ մարդ, վոր դեռ չգիտես, թե ճշմարտու-թիւնը որացուցի պես, տարին մի անգամ փոխվում է. հարկ դիպվածներում և ամիսը մի անգամ:

«Հասկացա, և ո՞րը քանի մի անգամ»:

— Այո՛, վորքան շատ, այնքան լավ. նոքա բարո-յապես աճեցնում են մարդու հասկացողութիւնը...

(Անհրեւոյթ սատանան) «Կեցցե՛՛ հոգեվոր վարժաւ-թյունը: Կեցցե՛՛ Լոյոլան»:

Առ այժմ միջոց չունինք ուրիշ բան ասելու. առ այժմ հերիքանում ենք յերկու տողով: Բայց մեր տե-սածը և լսածը մեր հետ գերեզման չտանելու խոստումը առնում ենք հրապարակով: Ընթերցող հասարակու-թիւնը կարող է հավատ ընծայել մեր խոստումներին, մա-նավանդ յիթե հիշե, վոր վոչ յերբեք զանցառու յեղանք մինչև այժմ կարելի հրատարակութիւնների մասին:

* Պ. Այվազովսքի բարեկամները մի նամակից, ուր նամակա-դիրը գնում է պ. Այվազովսքի բուն խոսքերը:

Թող պ. Զամուռճյանը քարոզե, թե հոգևորներից
դուրս փրկություն չկա, թող պ. Այվազովսքին յուր
սպառնացած քննությունը սկսանե (վհհ, ի՞նչ սարսափ-
մեր համար), Հյուսիսափայլը կը կշռե նոցա արժա-
նի պատասխանը: (Sic!):

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ «ՅԵՐԿՈՒ ՏՈՂ»-Ը

«Յ Ե Ր Կ Ո Ւ տ ո ղ» պամֆլետը, վոր կարելի չե համարել
Նալբանդյանի քաղաքական-հրապարակախոսական փայլուն գոր-
ծերից մեկը, առանձին բրոշյուրով լույս ե տեսել 1861 թվին,
Փարիզում, արտասահմանում կատարած նրա յերկրորդ ճանապար-
հորդության ժամանակ:

1860 թ. նոյեմբերի 20-ին գնալով Պոլիս և մոտ մեկ ամիս
(մինչև 1860 թ. դեկտեմբերի 21-ը) մնալով այնտեղ, Նալբանդյա-
նը յեռանդուն մասնակցություն եր ունեցել պոլսահայ հասարա-
կական կյանքին: Դա արեմտահայ հասարակական ցարգացման «Փո-
թորիկ և դրոշի» — սահմանադրական յերկուսքին հաջորդող ժա-
մանակվոր «Գաղանթի» — շրջանն եր: 1860 թ. ոգոստոսի 25-ին
Ազգային ժողովում արդեն ընդունվել եր սահմանադրությունը:
«Յեքջանիկ պիտի համարի ան ալ զինքը, — գրում ե Հ. Սըվաճյանը
Նալբանդյանի այցի առթիվ, — վոր ասանկ ատեն մը, ուր ազգը
սահմանադրական կառավարության մը ներքո կը գտնվի, ուր ընդ-
հանուր շարժում մը կա դեպի հառաջադիմություն, ուր շշուկ բը-
նավին չըլավեր ներքին խռովությանց ու յերկպառակությանց,
ուր մեկ հատիկ կողմնակցություն մը մնացած ե, այն ե բոլոր աղ-
ղը, վորուն ձեռքը գրոշակն ե լուսավորության, ուր չե թե միայն
լուսավորչական մասին մեջ չկա կողմերու բաժանմունք, այլ և
վոչ լուսավորչականի, հռովմեյականի, բողոքականի կռիվ կա, ուր
զանազան կրոնքե հայերը մոռանալով իրենց յերբեմն ըրած կրո-
նական անմիտ և ազգակործան վեճերը, ձեռք-ձեռքի կուտան, մի-
անան ազգայնության ծառայելու համար»: Սըվաճյանն, անշուշտ,
չափազանցում եր սահմանադրության նշանակությունը, սխալ-
վում, վորովհետեւ այդ նույն ժամանակաշրջանում նախապատ-
րաստվում եր սահմանադրական նոր ռեակցիան, վորի գլուխ եյին
անցած պատերազմն ու Յերուսաղեմի միաբանությունը: Վերջին-
ներս կոնստիդապիայի յենթարկելով բոլոր հետադիմական ու
ռեակցիոն ուժերը, կարողացան ազդել բուրժուազիայի, լիբերալ-

ների վրա, վորոնք վախենում էին դեմոկրատիայի որեցոր հասունացող ակտիվութունից, և առաջ բերել 1863 թ. կլամա-պլ-ուտ սահմանադրութունը, վորը հիմնական վերափոխման երկն-թափվել է Ֆլաս դեմոկրատիայի:

Յուսկուտարի հեմարանի առիթով 1840-ական թվականնե-րից ամերիայության դեմ սկսված պայքարը և սահմանադրական պայքարն այն նշանակութունն ունեցան, վոր արեմտահայ դեմո-կրատիան լուսնց դասակարգային ինքնագիտակցության ուղին: Դրան խոչընդոտելով նպաստում էին նաև Յեմերսոնյան տեղի ու-նեցած սոցիալական շարժումները՝ 1848 թվականի Ֆրանսիական հեղափոխութունը, իտալական ազգային շարժումը (1859 թ.) և այլն: Ի դեպ, տաճկահայ դեմոկրատիայի լավագույն ներկայա-ցուցիչներից վրամանը նույնիսկ անմիջական մասնակցութուն էին ունեցել այդ շարժումներին: Ուրիանի Սա. Վոսկանը Փա-րիզում անձամբ մասնակցել էր 1848 թ. փետրվարյան հեղափո-խությանը և այդ պատճառով բանտարկվել 54 օր:

Այս ամենը նպաստավոր հոգ եր ստեղծում Պոլսում հա-սարակական-քաղաքական գործունեյության համար: Պատահական չէր, վոր առաջին անգամ Պոլսում ստեղծվեցին հասարակական մի շարք ընկերություններ ու թերթեր: Ուրիանի՝ «Համազգայց» և «Բարեգործական» ընկերությունները, ապա՝ Սա. Վոսկանի՝ Փա-րիզում հրատարակվող «Արեւելք»-ն ու «Արեւմուտք»-ը և այլն:

Այս ամենը չէր կարող վրիպել Նալբանդյանի ուշադրությու-նից: Արեւմտահայկանքին մոտիկից ծանոթանալը նոր հեռանկար-ներ էր բաց անում նրա առաջ՝ ցարիզմի դեմ կազմակերպվող համաժողովրդական ընդհանուր ապստամբության տեսակետից: Ինչպես չարեւում և Ս. Թադևրյանի 1862 թվին գրած հայտնի նա-մակից, Նալբանդյանը հենվելով «Մեղու»-ի շուրջը համախմբված դեմոկրատական խնայելիքների վրա, տեղում, լեզու սկզբունք-ներով, կազմակերպել և զանազան ընկերություններ, վորոնք հետա-դաշում վեր են ածվել (կամ պիտի վերածվեին) հեղափոխական կազմակերպությունների: Այնպես վոր 60-ական թվականներից սկսած «ամեն օր Պոլսում և մյուս հայաբնակ քաղաքներում» ծա-ղող ընկերությունների մեջ, անպայման, իր մասն է ունեցել մեծ հեղափոխականը:

Թադևրյանն իր նամակի մեջ հաղորդելով, վոր «Յերեք Մա-սոններում» ընկերության պես մի ընկերություն են կազմակեր-

պել, ավելացնում է՝ «Հույս ունիմ, վոր այս յեղբայրութենեն ողուտ քաղենք, վասն զի ասոր ծայրը հեռուն է»:

Նամակի բովանդակությունից յերևում է, վոր Թադևրյանն այդև Բարեգործական ընկերության խաղաղ անդամներից մեկը չէր, մի ընկերություն, վորի գլխավոր նպատակն էր՝ «Վորք և անտեր տղոց յերկրագործության ձրի դպրոցներ բանալով, աղ-բատությունը բարեկեցիկ կյանքի դարձնելու, մարացկանությու-նը բաժնալու, աղիտությունը հալածելու...»:

Կսուկածից վեր ե, վոր Նալբանդյանը «Բարեգործական ընկե-րության» մի շարք անդամների (Թադևրյան, Սլավաճյան) վրա հեն-վելով, Պոլսում հեղափոխական կազմակերպություն եր հիմնել, վորը կապ ուներ Լոնդոնի պրոպագանդիստների և Ռուսաստանի հեղափոխական շրջանների հետ:

Դրանով և անա բացատրվում Պոլսում ամենակարճ ժա-մանակամիջոցում նրա ձեռք բերած հակապալան ժողովրդակա-նությունը: Դրան առանձնապես նպաստեց «Մեղու»-ի ու «Արե-վելք»-ի շուրջը համախմբված առաջավոր խնայելիքների:

Այդ խնայելիքներից զգուս էր, վոր հանձին Նալբանդյանի՝ ֆեոդալ-բուրժուական դասակարգերի, սուլթանիզմի և ցարիզմի դեմ մղած հայ ժողովրդի ազատագրական, ընդհանուր պայքարի գլուխ է կանգնել մի մարտաշունչ հեղափոխական:

Նալբանդյանի հասարակական-քաղաքական գործունեյությունն ու լայն ժողովրդականությունը չէին կարող չզրգուել «խավա-րյալներին», վորոնք արդեն նախապատրաստում էին հակասահ-մանադրական նոր ուսակցիան: Այդ հոսանքի պարագլուխներից մեկն եր Խրեմստչյան Չամուռճյանը, վորը 1860 թ. «Յերեվակ»-ում տպագրած իր մի շարք հոդվածներում հանդես եր յեկել դեերի գոյության պաշտպանությամբ: Այդ հոդի վրա եր տեղի ունեցավ Նալբանդյանի ու Չամուռճյանի առաջին բաղիտմբ: «Մեղու»-ում տպագրված «Հրաշափառ խայտառակություն» հոդվածում Նալբան-դյանը (Շահբեգ ստորագրությամբ) խիստ ուրիշով յենթաբկեց Չամուռճյանի միջնադարյան սոփեստությունները: Վերջինս պա-տասխանեց Նալբանդյանին «Խայտառակության քննություն» հոդ-վածով, ուր շարունակում եր փաստաբանել դեերի գոյությու-նը: Այդ ժամանակ եր անա, վոր Վանի առաջնորդ Պողոս վար-

* «Կուսակ Հայոց աշխարհին», 1852, էջ 617 և հետ:

դապետն իր մի շարք քրեական արարքներով գրդեւել եր գա-
վառի աղգարնակութեանն ու Պոլսի առաջադեմ շերտերին:

Վանեցի Պողոսի խնդիրը, վորը յերկար վեճերի տեղիք տվեց,
սահմանադրութեան համար մի փորձաքար եր: Այս վեճերի ըն-
թացքում միանգամայն պարզվեց «սահմանադրութեան» խիստ չա-
փավոր բնույթը և ռեակցիայի կողմը հակվող բուրժուազիայի ան-
հետևողական ու յերերուն դիրքը:

«Մեկու»-ի խմբագրութեանն ուղղած իր նամակի մեջ Նալբան-
դյանը հարձակվելով Պողոսի վրա՝ պահանջելով նրան քաղաքա-
ցիական դատարանին հանձնել, միաժամանակ և քննադատում եր
լիբերալների այդ դիրքը և աշխատում եր սահմանա-
դրութեան լիբերալ սկզբունքներին ուղիղ կա-
լուծում տալ:

«Վոչ յերբեք պիտի առաջանա աղգը,—գրում ե նա,—հետևելով
մի տեսակ մարդերի վարդապետութեան, վորոնք զգում եյին ան-
ցածի և հնի ամբողջունը, բայց սրտի և հոգու քաջութեան պա-
կասութեանից վախենում են միանգամայն կտրել բաժանել յուր-
յանց անձը տխուր անցածից և վտոք կոխել վճռաբար նոր սահ-
մանադրութի վրա, ուր մանուկ ատուգութեամբ ծածանում ե առաջ-
ընթացների գորշակը»: «Որենքը պատժում ե հանցավորը, սակայցին
այստեղ տեսնում ե մի լոկ վրեժախնդրութուն, բայց այդ արդա-
րացի հատուցումի մեջ տեսնում ենք հասարակաց իրավունքի
պաշտպանութիւն: Վոչ վոր չե կարող հանցանք գործել առանց
ուրիշի իրավունքը հափշտակելու և վոչ վոր չե կարող հանցանք
պաշտպանել առանց զրկվածի իրավունքը խեղդելու»:

Նալբանդյանը հեղափոխական կրքոտութեամբ խոսում եր
զրկվածների «բնական ու հավասար» իրավունքների մասին: Այդ
արդեն բավական եր, վորպեսզի Չամուռճյանը նրան համարեր
սոցիալիստ, Ժ. Ժ. Ռուսսոյի գրութիւն ընդունող: «Բուն գրութիւն-
նը,—գրում ե նա,—Ռուսսոյ հռչակավոր անհավատ հեղինակին
Պատճառք անհավասարութեան վիճակաց ի մարդիկ խորագրով շե-
նած ձառն ե և՛ անցյալ դարուն վերջը և՛ ներկա դարուն կեսին
(1848 թ.) Գաղղիան և յետքը բոլոր Յեվրոպա տակն ի վրա ընող
քոսիայի սպաներուն կամ կարմիր հասարակապետականներուն գրու-
թիւնն ե»:

Չամուռճյանը, այդպիսով, զբաղվում եր քսու մատնութեամբ
և աշխատում եր Նալբանդյանի վրա հրավիրել ռուսական դեսպա-

նութեանն ուղարկութիւնը: Մեծ մասամբ դրանով ե բացատրվում
այն, վոր Պոլսում նրա հողվածը «ամեն տեսակ մարդերի վրա
ցուրտ ապավորութիւն եր գործել»:

Ռուսական դեսպանութիւնը, յերը հետագայում Չամուռճյա-
նին թողակավորեց 2500 փարայով, անշուշտ, հաշվի յեր առել նրա
վոչ միայն ապագա, այլև անցյալում կատարած այս «կարեւոր»
ծառայութիւնները: Դրանով իսկ Չամուռճյանը մատնում եր իր
հանցաւոր կապերը նաև Այվազովսկու և Ընկ. հետ, վորոնք նույն
ժամանակամիջոցում, ինչպես ազատացում են Յենտրաբիւիվում
գտնված փաստերը, շարունակում եյին գաղտնի դաժաններ ուղար-
կել ռուս. ներքին գործոց մինիստրին և Նալբանդյանի հասցեյին
վարկաբեկիչ նամակներ տարածել:

1858 թվից սկսած, Նալբանդյանը մի քանի անգամ ամբաս-
տանդել եր Այվազովսկու կողմից ռուսաց ներքին գործոց մի-
նիստրութեան առջև Այդ ամենի հիման վրա, մինիստրութիւնը
գործ բաց արեց «Հյուսիսափայլ»-ի դեմ, հարցաքննելով և կաս-
կածի տակ առնելով նաև Նալբանդյանին: Այնպես վոր 1859 թ.
«Հյուսիսափայլ»-ի փակման վտանգը միանգամայն ռեալ եր: Այդ
վտանգի հետ են կապված Նալբանդյանի վարած բանակցու-
թիւնները «Հյուսիսափայլը» արտասահման տեղափոխելու մասին:
Ռուսաստանի գրաքննական պայմանները Նալբանդյանին զրկել
եյին ցարիզմի գործակալներին արժանի պատասխան տալու
հնարավորութիւնից, և ահա, վերջապես, նրան առաջին անգամ
հաշողվում ե հայտնի «Յերկու տող» պամֆլետում լիաշունչ
հրեղով գրեւորելու հեղափոխական դեմոկրատի խոր թշնամու-
թիւնը Չամուռճյանների ու Այվազովսկիների նկատմամբ, մեր-
կացնելու նրանց վորպես կեղտոտ լրտեսների ու վաճառված
զրչակների, իսկ իր մասին աղաքաբեկու, թե՛

«Մեր ազատական նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրա-
վունքը պաշտպանելու: Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստնե-
րին, ոոքա յուրյանց արծաթի թուղթերի տակ միշտ անխոցելի
յեն, նաև բռնակալների իշխանութեան մեջ:

Բայց այն խեղճ հայը, այն հարստահարված, վողորմելի, աղ-
քատ, մերկ և քաղցած հայը, վոչ միայն ճնշված ոտարներեց և
բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգեորդներից և,
կիսազրազեւ, ուսումնական կամ փիլիսոփա ասվածներից, ահա
այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում ե մեր ու-

շագրուեթյունը և նորան դարձյալ առանց և վայրկեանական յերկմտության, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը»:

Այսպիսով, Նալբանդյանը մերկացնելով պահպանողականությունը, միաժամանակ և սահմանափակում էր իր ժամանակի լիբերալ բուրժուական բոլոր հոսանքներին, վորոնք այս կամ այն չափով ծառայում էին ցարեղմի գաղութային ազրեւելային:

Նալբանդյանը «Յերկու տող»-ի մեջ պատմականորեն ցույց է տալիս, թե ախրապետները—Ֆրանսիայի, Անգլիայի և հատկապես «քրիստոնեական» ցարեղմի նկատմամբ հայ շահագործող դասակարգերի կողմից ցուցաբերված ստրկական վերաբերմունքը ինչ աղետների յետևանքների հայ ժողովրդին և ինչ աղետներ կարող է դեռ բերել:

Նկատել առնելով, վոր 1861 թ. ռեֆորմի շրջանում արդեն ցարեղմին պաշարած ազրաբային ճգնաժամը դուռ էր բաց անում ազգային ազատագրական շարժումների առաջ, Նալբանդյանը գրում էր՝ «Տարիները վազում են փայլակի շուտությամբ, որբերը թռչում են, վորպես մի վայրկյան: Վախենում ենք և իրավունք ունինք վախենալու, թե մի գուցե, մինչև հայը կշտանա յուր մահաման քնից, լուսինը անդրադարձնալ դեռ հորիզոնից ներքև»: Այսպիսով, Նալբանդյանը Փարիզից արձագանքում էր Չեքոսլովակիայում, վորն իր հերթին, նույն ժամանակամիջոցում հեղափոխական պայքարի խրախույս էր կարգում և գնում կացնի վճռահատության խնդրը: «Յերկու տող»-ի պարզվում է, վոր դա, անշուշտ, պատահական գուզադրվություն չէր, այլ քաղաքական մի միասնական շարժման տակադրված թղթող պահանջ:

Մարքսն ու Ենգելսը նույնիսկ 1863 թվին չեյին բացատրում գյուղացիական հեղափոխության հնարավորությունը Ռուսաստանում: Ենգելսը 63 թ. փետրվարի 17-ին Մարքսին գրում էր. «Յեթե նրանք (չեյերը) կարողանան մինչև մարտի 15-ը դիմանալ Ռուսաստանում կրակի շարժումը»: Մերկացնելով ցարական լրտեսներին, Նալբանդյանը «Յերկու տող»-ի մեջ շատ վորոշ ակնարկներով խոսում է լեհական ապստամբության մասին և գրեթե ապստամբության կոչ անում: Դրա մեջ է, ահա, «Յերկու տող»-ի պատմական մեծ արժեքը:

Նալբանդյանի գործունեության այդ շրջանի խոր ուսումնասիրությունը ցույց է տալիս, վոր 1860—1861 և ապա 62 թվերին

նա արդեն դարձել էր այն կենտրոնական դեմքը, վորի շուրջն էին համախմբվում Արևմուտքում և Ռուսաստանում բարձրացող հայ դեմոկրատական հեղափոխական ուժերը: Ժամանակակիցներից Կ. Յեղյանը, Սմբատ Շահադիզի «Լեհոնի վիշտը» պոեմի մասին արած իր յեղրահանգման մեջ ասում է՝ «Հայերը իսկապես բաժանված են յերկու կուսակցությունների: Պաշտոնաթող ախրապետը խորհրդական Բուզադովը և մյուս ուշորա լիբերալները (իմա՝ դեմոկրատները. Ա. Մ.) չեն ցանկանում մոտենալ ռուսներին», նրանք համախմբված են Նալբանդյանի շուրջը: Մյուս կուսակցությունը հայ ազգությունը համարում է նեխվող մի դիակ, վորը արդեն գուրկ լինելով վորեկ կենսունակությունից, միանգամայն ձուլվելու յն այն տարրերի հետ, վորոնց միջավայրում գտնվում են նրա վերապրող մասերը»: Յեղյանի այդ դիտողության մեջ առանձնապես կարևորն այն է, վոր Նալբանդյանն այստեղ հանդես է գալիս իբրև կուսակցական առաջնորդ: Նոր հայտնաբերվող վիստերը վոչ միայն հաստատում են այդ պնդումը, այլև ցույց են տալիս, վոր Նալբանդյանը իբրև այդպիսին ամենուրեք վայելում էր հայ ժողովրդի ջերմ սերն ու համակրանքը և արժանանում նրա աջակցությանը: Նալբանդյանի կրակոտ խոսքերը յերբեք առանց արձագանքի չեյին անցնում, դրանք լսանդամում էին մասսաներին և տարածվում թյուրքահայաստանի ամենահեռավոր գավառները: Ազատության նրա վորոտընդոսս կանչը («Յերկու տող»-ի «Յերկու տող»-ի մարտական դադափարները յերկար ժամանակ վողեվորել են հայ ժողովրդի առաջավոր շերտերին ու հեղափոխականորեն տրամադրված մասսաներին: «Յերկու տող»-ի մեջ արժարժված դադափարները արձագանք են գտել Հայկում, Կեսաբիայում, Կալիաթայում, Փարիզում, Վանում, Թիֆլիսում և այլուր: Բավական է նշել, թե ինչպես 1863 թվին, յերբ Նալբանդյանը իբրև քաղաքական մեղադրյալ հոտած էր Պետրոպոլիսի ամբոցում, Կեսաբիայից մի անանուր թղթակից պաշտպանելով «Յերկու տող»-ի հիմնական դրույթները և այդ տեսակետից քննադատելով տեղական իշխաններին ու տիրապետող դասերին, նրանց մարտակոչ է նետում, ասելով. «մեր բնաբներ «Յերկու

* Իմա՝ ցարեղմը. Ա. Մ.

տող»—տետրակին բնաբանն ե՛ւ «Թող վորոտա մեր գլխույն» և այլն»։*

Պատահական չէր, վոր 60—65 թվականներից սկսած, թե արտասահմանում ու թե Ռուսաստանում, հայ հասարակության մեջ առանձնապես ուժեղանում էր հակացարական ազիտացիան։

«Հայոց ժողովրդյան չորսեն յերեք մասը վերջին աղքատության մեջ են,—գրում է հայտնի գործիչ Մ. Աղաբեկյանը,—թե հարկաց ծանրության կողմանե, թե գավառապետաց և դատավորաց անիրավության... Յավելով ասում ենք, վոր շատ ճշմարտություններ կան, վոր Ռուսաստանի մեջ վոչ իսկ խոսիլ կարելի չե և վոչ գրել և Միբրիայի սառնամանիքեն ստիպված մարդոց մեծ մասը ճշմարտությունը սրտումը գերեզման է իջնում»։

Նալբանդյանը խորապես գիտակցում էր, վոր ինքը սկսված հասարակական առաջավոր շարժման պարագլուխն է, վորով իսկ սլայ-մանավորվում էր նրա ամբողջ վճռականությունն ու ինքնավստահությունը։ Այս տեսակետից հետաքրքիր փաստ է այն, վոր նա պաշտոնական մարմին չլինելով՝ այնուամենայնիվ սպառնում է կրոնական ժողովին՝ նրան հակառակ մի շրջաբերական հրատա-րակել... և խորին արհամարհանքով ու հեղնանքով է վերաբերվում ցարիզմի վարձկանների կողմից իր համար նախապատրաստվող «Միբրիայի սառնամանիքներին»։

ԱԶԳԱՅԻՆ ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ

Շատ հին ժամանակներից սկսած, հայոց ազգային և ներքին գործերի կառավարությունը, Տաճկաստանի մեջ, միշտ հայոց ձեռքում էր թեև, բայց այդ կառավարության ղեկավարքը լոկ մի քանի հոգի բերունակալ մարդիկ լինելով, բնականաբար, կառավարությունը հանդիսացնում էր մի այնպիսի անկարգություն և խառնափնդորություն, վոր հազիվ կարելի չե յերազում յերեակայել։ Ինչպես ասացինք, մի քանի այդ կարգի և տեսակի վատթար մարդիկ, կղերի հետ միացած, յուրյանց ձեռքը ձգելով ազգային ջարդ ու փշուր լաստի դեկը, առանց որինավոր հոգաբարձության, առանց մաքուր խղճմտանքի և միմիայն յուրյանց անձնական շահին, ախտերին և կրքերին ծառայելով, վոչ միայն հառաջ չեյին մղում այդ կիսակործան և արևտանջ լաստը, վոչ միայն փուլթ չունեյին, գոնե, մի խաղաղ ծովածոցի կամ նավահանգստի մեջ նորան ապահովելու, այլև քակում էյին և խլում էյին այդ լաստից այսոր այս փայտը, վաղը այն յերկաթը, յերբորդ որ մյուս չվանը և յուրյանց չար որինակներով և գործերով ուրիշներին ևս տեղիք տալիս և հրավիրում նույնը գործելու ազգի խաղաղ կործանության համար։

Յրոհական ձեղքվածքը, վոր կան այսոր մեր ազգի մեջ, յերեք հառաջացած չեն բուն դավանության

* «Փարիզ», 1863 թ., հունվար։

բանական խնդիրներին, այլ պատրաստված և արդյունացած ազգային ներքին և կրոնական գործերի չարաչար կառավարութենից: Այս բանը նոր ապացուցության կարոտ չէ. ամենին հայտնի չէ, ապացույց խնդրողն ևս այսօր կարող և մեր ասածի վկայությունքը տեսանել այն կենդանի և տակավին թարմ իրողությանց մեջ, վոր ամեն ուր գործվում են մեր աչքի առաջն:

Մեք սարսափում ենք, յերբ աչք ենք ձգում այն անշքացած, անապատացած աշխարհի վերա, ուր յերբեմն փողփողում եր Արշակունյաց հաղթակիր զրոշակը, ուր այժմ մեր խեղճ, անտեր և անողնական ժողովուրդը միխոնավոր բազմությամբ թշվառության, հարստահարության և հուսահատության մինչև հնարավոր ծայրը հասած, փոխանակ արտասուքի, արյուն է քամում աչքերից, յերբ լաց է լինում, և ուր, դարձյալ, հայակերպ և գիշերադեմ վամպիրները տակավին չեն կշտանում անմեղ զոհի—խեղճ ժողովրդի—արյունը ծծելուց:

Ծանր և համբաշարժ եր ազգային լուսավորության ընթացքը Տաճկաստանի մեջ և այդ ընթացքն ևս անհիմն և սայթաքելի. հայտնի չէ թե այն թըշվառ հանգամանաց մեջ ուրիշ կերպ չեր ևս կարող լինել: Դարեր անցան, շատ ու շատ սերունդներ ահ ոհ քաշելով յեկան գնացին, շատ իրավունք վտանակոխ յեղան, շատ դանձեր հափշտակվեցան, շատ տուններ քարուքանդ յեղան, մինչև վոր սրանից մի քանի տարի հառաջ «Սահմանադրություն» բառը մեր ազգայինք արտասանեցին:

Սահմանադրություն, կրկնեց հարստահարված և կիսաշունչ ժողովուրդը. Սահմանադրություն, լավեցավ յեգիպտական բուրգերից մինչև Վարազա սարը. Սահ-

մանադրություն, աղաղակեցին և հրճվեցան կենդանի յերիտասարդները:

Այն միջոցին մինչև այնտեղ եր հասած ազգային կառավարության զերածայրյալ անպիտանությունը, վոր նոքա իսկ, վոր միակ պատճառ էին այն չարաչար և դատապարտելի կառավարության, չհամարձակվեցան բերան բանալ ընդդեմ խոսելու. պատճառ, վտաքից մինչև գլուխ տակալված էին աղտեղի գործերով, և հասարակաց ազգի բողոքը նոցա և նոցա նմանների ընդդեմ, վաղուց և վաղուց ծանուցած, մինչև յերկինք եր հասնում:

Սահմանը դրվեցավ:

«Կեցցե՛ք Սահմանադրություն»:

Տակավին լավում եր այս խոսքը հազարավոր բազմության բերանից. տակավին Հյուսիսային-սկիւնախի դաշտավայրը յուր մեջ ունեւր այն որհներգու բազմությունը, մյուս կողմում նոքա, վոր կորուսել էին յուրյանց ժառանգական կողոպուտը, յուրյանց մշտնջենական վորսը, յուրյանց լուռ և անխոս զոհը, վորո արյունով ներկել էին յուրյանց քիթ ու պուռնկը, սթափեցան առաջին հարվածի պատճառած ապշութենից, դարձեցան և սկսան այնուհետև դուրս սողալ յուրյանց խավարային վորջերից և վազել Պեշիկ-թան:

«Սահմանադրություն. ի՞նչ ասել է Սահմանադրություն. տերության մեջ տերություն կանգնեցնել. տերությունը վավերացուցած չէ (թեև ինքյանք ստորագրած էին), մեք չենք ընդունում Սահմանադրություն, մեք չենք ճանաչում Սահմանադրություն, վոր լոկ յերկու նպատակով է հառաջացած, նախ՝ ազգը սալթ անհավատ ընելու, յերկրորդ, տերության դեմ ապստամբեցնելու»:

Այս մի վասակյան մատնություն եր, մի մեհրու-

ժանյան սուրբ, վոր շատ անգամ մերկացած լինելով, նաև տասն և վեց դար անցանելուց հետո վերատին քարշեցին ազգի ընդդեմ: Հայտնի յե, թե տերությունը առիթ ստացավ ներս մտանելու մեր ազգային ներքին գործերի մեջ. նորա ցանկությունն ևս այդ եր, իսկ խռովարարների և ազգի դավաճանների համար ամեն հնաժողով սուրբ եր և շուն կարելի յեր մատաղ առնել, միայն թե Սահմանադրությունը կործանվեա: Այնուհետև յերևեցավ մի սոսկալի ճեղք, մի սարսափելի խռովություն, վոր միմիայն Տաճկաստանի առհասարակ խառնափնդոր կառավարության մեջ կարող եր աննշմարելի կամ վոչ այնքան զգալի լինել, թեև այնտեղ ևս չմարտկեցավ և յեկրոպական որազիրքը շատ անգամ եջեր լցուցին այդ մասին: Յերևեցան կուսակցությունք, Սահմանադրության պաշտպանք և թշնամիք, հառաջընթացք և հետընթացք, լուսավորչալ և խավարչալ:

Յեվ վորովհետև բնականաբար «Ուր գէշն իցէ, անդր ժողովեացին արծուիք», ուստի միացան այդ բոլոր գիշակերքը և յուրյանց կեռ կողացները և սուր մագիլները առավել ևս սրեցին անպատասպար և աղավանդամ ժողովրդի ընդդեմ, վոր վոչ պեյ եր, վոչ եֆենտի և վոչ փաշաների առաջև ծուռիկ չոքելով մեջքի ողը կոտրած, հետևաբար և առավել տկար, տկար ասում ենք, բռնությունը հասկանալով մի կոպիտ ույժ:

Սահմանադրության բարեկամների միակ գեներն եր ճշմարտությունը, վոր լուսափայլ եյին կացուցանում հայկական խոսքի միջնորդությամբ, գրիչը ձեռքին անձանձիր ձգնելով. և վորովհետև ճշմարտությունը չունի մասն, չունի վարձ, ուստի և ոտարոտի չեր, յերբ վոմանք ճանապարհի կիսից յետ դարձան, յերբ մյուս

սերը լավողիկեցի դարձան, յերբ մի քանի ուրիշներ անդլիական տրիմմերության որինակը ցույց տվեցին:

Աղաղակեց հասարակ ժողովուրդը, հեղեղի պես վազեց նորա հոսանքը դեպի պատրիարքարան, ուր հակառակ ազգի կամքին և ընդդեմ Սահմանադրության, ազգի թշվառության պարտավորքը վերատին հավաքվեց եյին յուրյանց սովորական խաղը խաղալու և ազգն ևս խաղալիք շինելու, ազգը ցրվեց այդ ավաղակաց ժողովը և «զաթոռս աղաւնեւաճառացն և զսեղանս հատաւաճառացն կործանեաց»: Այդ միջոցին արյուն քրտնեցան արի յերիտասարդները, այդ խորհրդավոր միջոցին վերջին ճիգը թափեց հայկական խոսքը և Արիստոտելի գիտությունը:

Տերությունը մի քննիչ ժողով կազմեց յերկու կողմի մարդերից, վոր պիտի քննեյին Սահմանադրությունը, պիտի սրբագրեյին նորան և ներկայացնեյին տերության:

Հյուսիսափայլը քաջ գիտե «տալ սրում գհարկ, գհարկ, որում զպատիւ, զպատիւ», ուստի և ամենեկին միտք չունի դատապարտել այն պարոնայքը, վոր նուտած եյին այնտեղ, վորպես սահմանադրասեր. Հյուսիսափայլը անարդարություն և համարում ուրանալ պ. Սերվիչենի աշխատությունը. Հյուսիսափայլը մինչև անգամ հակամիտ և կարծել, վոր, առանց այդ արգո պարոնին, Սահմանադրության վտանգը կարող եր գուցե ավելի ծանրանալ. բայց Հյուսիսափայլը չե կարող գովել այն թուլությունքը և գեղոցությունքը, վոր արգո պարոնը շնորհում եր խավարչաների կողմին. Հյուսիսափայլը չե կարող ուրախությամբ հիշել, յերբ պ. Սերվիչենը, վորպես միակ հույս սահ-

մանադրասիրաց, չկամեր գործ դնել յուր բոլոր ազգեցուցյունը լիամասն կերպով:

Արգո պարոնը, վորպես ըստ Սահմանադրութեան ընտրված նախագահ ընդհանուր ժողովին, քանի վոր հրապարակով հանձն եր առել այդ պաշտօնը, բնականաբար չեր կարող չպաշտպանել Սահմանադրութիւնը. բայց այդ փոքր եր, յեթե պիտի լիներ թերի. նա կարող եր դեմ կենալ մի քանի բռնակալ առաջարկութեանց, վոր առնում էյին խավարյալք, կարող եր, առնում ենք, բայց ընկալ հասարակաց հոսանքի մեջ: Այնուհետեւ, մի կողմ թողած Սահմանադրութեան գործը, այդ քննիչ ժողովի առաջին տնօրէնութիւնն յեղալ հայկական խոսքը ճշդէլ տպագրութեան ազատութիւնը բռնաբարել: Պ. Սերվիշենը կամակից եր այս բանին և մեք առ ի սրտե ցափում ենք, վորովհետեւ նորան ճանաչում ենք ստուգապես ազգասեր և ստուգապես մի հարգելի մարդ:

Այո, Հյուսիսափայլը շատ ե պահանջում արգո Սերվիշենից, բայց Հյուսիսափայլը ցույց ե տալիս սրանով, թե շատ ե հարգում նորան, վորովհետեւ գործը գործունյա մարդից են պահանջում:

Զիարդ և իցե, իրողութիւնը այս ե, վոր այդ ժողովակի կազմվելուց հետո, բոլոր ազգային կառավարութիւնը կենտրոնացալ նորա մեջ. ուրիշ կառավարութիւն չմնաց վոչ սահմանադրական, և վոչ արտասահման: Բայց այս միջոցին տարիներ անցան, ազգի տարտամ վիճակը շարունակվեցալ և ազգային կառավարութիւնը մնալով անպոչ և անգլուխ, մեծապես պատճառ դարձալ գալվառների անկարգութեանց գործառնութիւն, վորոնք մորմոքեցուցիչ և աղեկեղ տեսարաններ ներկայացուցին աչք ունեցողի առաջն:

Սուրբ Հակոբի վանքը մնաց ավազակների ձեռք.

ազգը արյուն թափել ստիպվեցալ, Հայաստանի հողը վերստին սկսալ հայոց արյունով և դիակներով պարարտանալ. ազգային կառավարութեան հանձնառուքը հող չտարան: Ի վերջո, թշվառութեան բաժակի տակ բան չմնաց, սրածութիւն, դաղթականութիւն, հակամայիցն կրօնափոխութիւն, ավեր, հալածականութիւն, շնորհավաճառութիւն, և այլն, և այլն, յուրյանց բոլոր դժոխային արբանյակներով թափվեցան ազգի վերա....

«Եղև պատարագս»...

Այսօր, գրեթե մի տարի յե, վոր Սահմանադրութիւնը վավերացալ տերութեան հրովարտակով. ստույգ ե, թլպաւած, ստոյգ ե, այս և այն մասնով խեղացած, այնուամենայնիւ մի Սահմանադրութիւն, վոր ազգի կառավարութիւնը տալիս ե հասարակաց ազգի ձեռքը, ազատելով նորան մի քանի բռնակալ թշվառականների լծից:

Հյուսիսափայլը հանդիսաբար հայտնում ե յուր առ ի սրտե շնորհակալութիւնը Սահմանադրութեան ոգտի համար հայտնի և անհայտ կերպով աշխատողներին (Հյուսիսափայլին թվում ե, թե անհայտ աշխատողքը վոչ պակաս գտնվեցան յուրյանց արդյունավորութեամբ, քան թե հայտնիքը), Հյուսիսափայլը շնորհակալ ե լինում ազգի ընդհանրութեան առաջն մեծարու Սերվիշենից:

Յերեսփոխանք ընտրվեցան, Ընդհանուր ժողովը կազմվեցալ, Պատրիարքը ընտրվեցալ, Բաղաքական ժողովը կազմվեցալ, թողունք մյուս Խորհուրդները, վոր այլապես կազմվեցան:

Ազգային վարչութեան անիւլ սկսալ կատարել յուր շրջանը:

Բայց, այդ վարչութիւնը աչքը ձգեց արդոք, վոր

տեսաներ, թե ի՞նչ վիճակի մեջ է ազգի կացութիւնը զավառներում: Ականջը բացեց արդոք լսելու համար ազգի աղետորով բողոքները, յաւր ներքին հալածողներին և հարստահարողներին ընդդէմ....

— Ծն, Մեղուն բավական չե՞ր գլխուէնուս, սա Հյուսիսափայլն ել ուրկե՞ յելավ... կեցի՞ք հելե, մեյմը ինք գինքնիս գտնանք... Տակավին չե՞ք գտած. վախենում ենք, մի գուցե յերբեք չգտանեք. յերանի՛ թե սխալվեցինք:

Իմակ պետք չէ:

Ըստ Սահմանադրութեան կազմված ազգային վարչութիւնը ազգային բարեկարգութիւնը սկսում է այսօր բռնութեամբ...

«Գեշը գեշով գեֆ կըլլա». բարով խերով Մեշտխեշան չընտրողներ այդ վարդապետութիւնը:

Կանչեցէք որագիր հրատարակողները, ճնշեցէք, խեղդ գրեք, ձեռագիր առեք, վոր բան չգրեն, լսեն, համրանան, պապանձվին, կուրանան, չտեսնեն, չլսեն, խրանան, մի խոսքով, քար և փայտ դառնան (վորով հետե անասունն անգամ տեսնում է, ինչ վոր նորա աչքի առաջն է գործվում), որագիր հրատարակողքն են ազգը տակ ու վեր բերողքը...

Յերիտասարդները և Մեղուն, վոր մահու չափ ճգնեցան Սահմանադրութիւնը պաշտպանելու, պիտի տեսնեն այսօր, վոր նոցա պաշտպանած Սահմանադրութեան գործադիրքը Սահմանադրութեան թշնամիների վաղեմի ցանկութիւնը կատարելու համար, արտասահման բռնակալութեամբ վարվում են Մեղուի հետ, վոր է յերիտասարդների և կենդանի ժողովրդի մաքուր բերանը, ազգի ցավերի և սուրխութեան ճշմարտապես հայտաբարը:

Ըստ Սահմանադրութեան կազմված վարչութիւնը արդեն սկսով արտականոն հնարներով և դատապարտելի ճանապարհներով յուր բոլոր ուժը Մեղուի ընդդէմ համաժողովել, և մինչև այն աստիճան անպատվեց յուր անձը, վոր սիրտ բռնեց մի ազգային բաղձարդուն որագրի ընդդէմ բողոքել: Ում....

Այդ սուրբ Սահակ Պարթեն եր հարցնում, իսկ Սուրմակները ուրիշ կերպով մտածում: Այսօր չկան այլևս Սահակ Պարթեններ: «Յաթոռն Մովսիսի նրստան գպիրք և փարիսեցիք»: Այսօր առատ ենք, զեղուն, թաթաղուն, շարժուն. ինչո՞վ. անտարակույս, Սուրմակներով, Բրքիշոններով, Այասակներով, վոր մի սահմանադրապես կազմված վարչութեան վերա ազդեցութիւն ունին, թեև չե պիտո ունենային «Ըստ Սահմանադրութեան»:

Ազգը վերստին հրավիրեց մեծարու Սերվիչեն եֆենտին, վոր նստի ընդհանուր ժողովի առաջին անգամ: Ընդհանուր ժողովի ատենադպիր ընտրված է հոյակապ Ռ. Գրիգոր եֆենտին:

Գավառների դրութիւնը նկարագրեց Մեղուն, վասպուրականի անայցել թշվառութիւնքը ստորագրեց Մեղուն, Իգնատիոսի դիմակը վերայից հանեց Մեղուն, Տորոսի խռովութիւնքը պատմեց Մեղուն, արժ. Խըրմյան Մկրտիչ վարդապետին պաշտպանեց Մեղուն, նորա վերա, գիշերային լուսութեան մեջ, հրացան դատարկողների ընդդէմ բողոքեց Մեղուն. զավառ չթողեց, քաղաք չթողեց, գեղ չթողեց, թաղ չթողեց, ամեն ծակ ու ծուկ մտավ յելավ Մեղուն. թող մեռնի Մեղուն:

Կոտրեցէք այդ հայելին, վոր իմ ճիվաղադէմ կերպարանքը ամեն ուր ինձ ցույց է տալիս. փշրեցէք նորան.... թող վանեցի Պողոսները փառավորվին, թող

տիրացու Հոսիսիմեյի Արությունը վտառեցրը ջուրը դնե,
փրկելէ. թող Արշալուսի գերապատիվ կրօնադրուժը,
այժմ Հալեպ գտնվող Նիկողոսը, ցնծաւ և պարեւ, թող
Իգնատիոսի պաշտպանութեան համար հողմարած նամակ-
ներ գրեն Մեղուին, թող Զաքարիան կարնի մեջ,
Սահմանադրութեանը նաեւ տերութեան հրովարտա-
կով հաստատվելուց հետո, յերբ արժ. Նրբմյանը հոր-
դորում եր ժողովուրդը, սիրով և միաբանութեամբ գործ
դնել Սահմանադրութեանը, քարոզե, թե ինքն ավե-
տարանից ուրիշ Սահմանադրութեան չե ճանաչում,
թող նույնը և ժողովուրդին ուսուցանե... թող վերջապես
ազգը մեռնի ու գերեզման դրվի, միայն... միայն...
Միայն թե մեր բանին չխառնվին, մեր մասին չգրեն,
մեզ չգատապարտեն, մեր կամքը իրել Մովսիսի պատ-
գամ ընդունեն. «մեր ըրածին կամ ընելիքին վրա չը-
խոսին»....

Իսկ ձեր «չըրածին և չընելիքին վրա» կարելի՞ յե
խոսել, սքանչելի՞ ղեկավարք ազգային վարչութեան.
«Անիկա ալ մեր գիտնալու բանն ե... Փնռք աստուծու,
ի՞նչ ե յեղեր, որե որ ազգերնիս կըհառաջագրին կոր
(գիտենք, կըգրին, բայց դեպի կործանումն), քիչ մը
պակասութեանը կան յեղեր... Թէր տեղ չկա, անոնք
ալ կամաց կամաց կըշտկվին... հիմա կու հիմա աս չա-
փով գոհ ըլլալու յե, խոհեմութեանը անանկ կըպահան-
ջե. ամենը մեկեն հոս տեյի կըլլել չըլլար... քչիկ,
քչիկ...—Ազգերնիս կըհառաջագրին կոր...»

Ազգի զավակները սրիկաների մատնված, սրախող-
խող են լինում յուրյանց մահիճներին մեջ, Իգնատիոս
յեղ ծախելու շահավետ առեւտրով ե պարտապում, նորա
արբանյակը շինականի վերջին յեղնը առաջ ձգած դե-
պի Իգնատիոսի ազարակն ե գնում: Քաղաքական ժո-

ղովը Մեղուի քամակից ընկած, միջոց չունի այն ար-
յունաշաղախ տեսարանների վերա մի բուպե յուր աչքը
ձգելու, «ազգերնիս կը հառաջագրին կոր»:

Ազգի աղջիկները և կանայք կը տառապին և կը
բռնաբարվին անորինակ և անլուր ժպրհութեամբ.
«ազգերնիս կը հառաջագրին կոր». մի քանի կին, մի
քանի աղջիկ «կը տառապին յեղեր... ի՞նչ կըլլա յեղեր...
ասլին ալ մխիթարական տեսարանք պակաս են մի.
Շողեր հանումը, Գործիա տուտուն թուղթն ու թավ-
լուն առջնին առած իրենք զվարճանալնեն զատ,
ուրիշներուն ալ դաս կուտան»...

Ազգային վարչութեան անդամքը այս զվարճալի
«փետելու և փետվելու» տեսարանը թողած, հիմա են,
վոր ականջները բանան հայկական ընդաբույս մաք-
րասիրութեան և պարկեշտութեան սրտաշարժ բողոք-
ները լսելու, մանավանդ վոր Իգնատիոսը նոցա խիղ-
ճը հանգստացրել ե «բոլորը մեծցրած և սուտ բաներ
են» գրելով: Ազգերնիս կը հառաջագրին կոր:

Այո, ասում ե Մեղուն, մշեցոց կարավանը հառաջ ե
գնում:

Այո, ասում ե Մեղուն, թշվառութեան և հարստա-
հարութեան յերեսից ստիպվելով, գաղթական այրին
հաց չունի յուր լացող վորդեկին տալու և արագվին ե
յերանի տալիս, վոր նորա ձագերը կուշտ են.

«Մամիկ, պատառ մի հանց...

— Հոգցա, հինչ տեղից քըզ հացիկ ճարեմ...

Մերիկը թողես, վահ, անթի յես...

Արգիլ, հորին գթեքը թափ տվիր,

Հորին գիմ Մոսոն քնից գարթ տվիր.

Արգիլ, քու ձագեր կուշտ են ու հանգիստ.

Մոռոն հաց կուգե՛, չկա՛... կը քաղվի՛ հողին։
 Մի՛ լար, Մհոտ, քսւն յեղէր լավո՛ւ.
 Դեռ գիշեր մուծն ե, քնի՛ր առվըտուն.
 Ո՛ր, Բուսն, հերիք մեզ թողնես մահրում,
 Հերիք քաշես զ՛եզ զարիպուծյուն.
 Քու ողուզ չոճուզ հերերից խեղճ են.
 Ես ի՞նչ դառն ուր ա, մեռնելու մեջն
 Զքեզի կը կանչեն»։

— Ասացին լացին, լացին ասացին... վեր կացին
 յերեսնին խաչակնքեցին. աստված կանչեցին, ձեռք ձեռ-
 քի բռնեցին, ոկտան քալել կարավանի ճամփով։ (Մե-
 դու, թիվ 226)։

«Ազգերնիս կը հառաջագիմե կոր»։

Բայց ի՞նչ լա յուր գլուխը ազգային վարչությունը.
 կարող ե բովանդակ ազգին հաց տալ։ Հյուսիսափայլի
 ասածը այդ չե, Հյուսիսափայլը յերևութների ընդ-
 դեմ հնար քարոզող չե, վոր միշտ անհիմն ե լինում,
 բայց Հյուսիսափայլը հրավիրում ե պատճառի ընդդեմ
 գործ դնել։ «Ի բառնիլ պատճառին, բառնի ե գործն»։
 Ազգային վարչությունը վոչ միայն խնամք չունի այդ
 պատճառների հիմքը փորելու, այլև հալածում ե նո-
 րանց, վոր ցույց են տալիս ազգին նորա բուն թշնամիքը։
 «Սուրբ բռնություն», ախոր այս խոսքն ենք մորմոր-
 վելով տեսանում ազգային վարչության դրոշի վերա։
 «Ազգերնիս կը հառաջագիմե կոր»....

Շարունակենք դեռևս, արզո՛ վարչությունդ ազ-
 գի. վճհ, ծանր ե մեզ հիշել անգամ այդ վարչության
 դատապարտելի զանցառությունքը ե իշխանության
 չարաչար գործադրությունը, թե՛ թե մանրամասն գրել-

բայց գիտել, գիտենք, ըստ վորում լույս ցերեկով գործ-
 ված են այդ բոլոր իրողությունքը։

Մեղուի վերա Դրանը գանգատելուց հառաջ, Գա-
 դաքական ժողովը կանչել եր բոլոր որագրապետներին
 ե ստորագրություն եր պահանջել, վոր այս ե այն
 բանը չգրեն։

Այն մարդիկը, վորոնք վոչ ազգային վարչության,
 վոչ յուրյանց ե վոչ տալու ստորագրության հարգը ե
 կշիռն եյին ճանաչում, իսկույն փութացան տալ պա-
 հանջված ձեռագիրը, վորովհետև հավատացած եյին,
 թե այդ բնավ արգելք չինելու չեր յուրյանց սովորական
 կերպով, սորա ե նորա բարոյականության վերա մուր
 քսելու, վորովհետև գիտեյին, թե ինքյանք կանչված
 եյին միմիայն պատշաճի համար ե կանչողների խոր-
 հուրդը ե դիտավորությունը եյապես ուրիշ մարդոց
 վերա յեր բեռաված։

Մեղուն չեր կարող նոցա նման թեթևաբար վար-
 լիլ. Մեղուն գիտեր, վոր այն ստորագրությունը ապա-
 գայում մի խայտառակության արձանագրություն պի-
 տի դառնա ազգային վարչության համար. Մեղուն չեր
 կարող ցանկանալ, վոր ինքը ձեռնտու յեղած լիներ
 այդ իրողության։ Մեղուն գիտեր, վոր մի բարոյական
 մարդ վոչ թե գրավոր, ձեռագրով, այլ յեթե ե լոկ խոսքով
 խոստանում ե այս կամ այն բանը իրավացի թե ա-
 նիւրավացի, այնուամենայնիվ պարտ ե յուր խոսքին
 հավատարիմ մնալ ե հողմացուցի պաշտոն չվարել. Մե-
 դուն չտվեց պահանջված ստորագրությունը ե յուր
 առաջիկա թերթում հիմնավոր փաստերով ապացուցեց,
 թե վերջան ծաղրալի յեր այդ պահանջողությունը։
 Մնաց վոր, Սահմանադրության մեջ այդպիսի բան
 չլինելով, յերեսփոխանաց ընդհանուր ժողովի վճռով այդ

բանը հառաջացած չլինելով, և Քաղաքական ժողովը բնավ իրավունք չունենալ արտականոն պահանջողութեան:

Քաղաքական ժողովի պատասխանը, յերևի, այն մեծադիր գանգատագիրն էր, վոր տեսել և Մեղուն վոստիկանարանի մեջ և վորո մասին հիշում և յուր 226 համարում:

Ճշմարիտը ասելով, մեք ամաչում ենք փոխանակ Քաղաքական ժողովին:

Վորքան մեք հիշում ենք, հետևյալ բաներիս մասին եր պահանջված ստորագրութեանը, ուստի և յերբեք չհրաժարեցավ Մեղուն. 1. Կրոնի ընդդեմ չգրել. 2) Սահմանադրութեան ընդդեմ չգրել. (բայց Սահմանադրութեան ընդդեմ գործել ներելի չէ Քաղաքական ժողովին). 3) Ազգային վարչութեան «ըրածին կամ ընելիքին վրա» չգրել և 4) անձնական պատվի չդիպչել:

Մեղուն, կրոնը և Սահմանադրութեանը միշտ պաշտպանած լինելով նաև այն ալեկոծյալ ժամանակներում, յերբ մի քանի հացկատակ մարդիկ ամենայն կերպով թշնամանում էյին յերկրորդը, և գաղտնի դավաճանութեամբ փորում էյին առաջնի հիմքը, նաև այն փոթորկալից միջոցներում, յերբ վոմանք այժմյան ազգային վարչութեան անդամներից, ընտրած լինելով Սահմանադրութեան հիմամբ, մահու չափ թշնամի էյին Սահմանադրութեան,—Մեղուն ինչ պատճառով պիտի ստորագրութեան տար, թե կրոնի և Սահմանադրութեան ընդդեմ չե գրելու, յերբ, վոչ թե միայն այդ հոգով գրիչ շարժած չեր, այլ դորա հակառակ, ինչպե՞ս ասացինք, միշտ պաշտպանած եր և՛ կրոնը, և՛ Սահմանադրութեանը, և մինչև այն աստիճան, վոր Սահմանա-

դրութեանը և հասարակաց ազգի անկողողտելի իրավունքը պաշտպանելու համար արժանի յեղավ վերոհիշյալ հացկատակների մատնութեամբ Դուռը կանչվելու և հանդիմանվելու:

Մեղուն ի բնե անտի Սահմանադրութեան պաշտպան և սահմանադրական վարչութեան շատագույն լինելով, չեր կարող յերբեք ընդդեմ վարվիլ բուն Սահմանադրութեան, ապորինի առաջարկված թղթեր ստորագրելով. «ազգային վարչութեան ըրածին կամ ընելիքին» վրա չգրելու պատվերը, Սահմանադրութեան ընդդեմ մի ձեռներեցութեան եր, ուստի և Մեղուն իշխանութեան ունեի ձեռագիր չտալ:

Բովանդակ աշխարհի յերեսին յեղած սահմանադրական կառավարութեանց մեջ բացարձակ ուժը մեծագույն մասի ձեռքումն է. բայց դիտելի չէ, վոր սահմանադրութեանց մեջ մի այսպիսի իրավունք մեծագույն մասի ձեռքում, և մի անսխալելի չար և վոչ դրական բարի. յենթադրվում է, թե մեծագույն մասն ավելի շուրարի. յենթադրվում է, թե մեծագույն մասը: Բայց պիտո չե մոռանալ, վոր բազմութեանը Սահմանադրութեան տրված իրավունքով հառաջ մղելով յուր կամքը, շատ անգամ ճնշում է փոքրագույն մասին վոչ միայն կամքը, այլ յերբեմն և իրավունքը:

Ազգային Սահմանադրութեան մեջ հիմնական կանոն է մեծագույն մասը, բայց փոքրագույն մասը կամ թերեւս լոկ մի յերեսփոխան, լոկ մի անդամ այս կամ այն ժողովի, ունի իրավունք հրապարակ հանել յուր դատողութեանը ընդդեմ մեծագույն մասի արած տրնորենութեան, թե՛ վոչ:

Խնդիրը այնտեղ չէ, թե վո՞ր կողմումն է ճշմարտու-

թյունը, այլ թե այդ միայնակ յերեսփոխանը կարճից
և հասարակության դատաստանին ներկայացնել յուր
կարծիքը և մեծագույն մասին վճիռը, թե՞ վոչ:

Յեթե բացասաբար պիտի պատասխանեն այս հարց-
մունքին, ապա ուրեմն թող հրատարակեն, թե արդի
Սահմանադրությունը ուրիշ բան չե, յեթե վոչ մեռած
տառ. իսկ յեթե գոնե ամաչելուց պիտի խոստովանին,
թե կա այդ ազատությունը, այն ժամանակ յերկրորդ
խնդիրն ենք հառաջ բերում: Մի յերեսփոխան, կամ մի
անգամ ժողովից դուրս, յուր անձնական կարծիքի վե-
րաբերությամբ մօր իրավունքով ավելի արտոնություն
ունի քան թե անդամ և յերեսփոխան չեղողը. յեթե մե-
ծագույն մասը մերժելով նորա կարծիքը, յուր կամքն
և հառաջ տարել մի վորոշյալ խնդրի մեջ, այդ խնդրի
վերաբերությամբ հաղթահարված փոքրագույն մասը կամ
մի անգամը ինչ բանով ավելի յե քան թե յերեսփոխան
կամ անգամ չեղողը: Հայտնի յե, թե համորեն ազգը
բաղկացնող յուրաքանչյուր անձը հավասար իրավունք
ունի ազգային խնդիրների մեջ. հայտնի յե, թե մե-
ծագույն մասի ձեռքով մի խնդիր լուծվելուց հետո,
փոքրագույն մասը նույն խնդրի վերաբերությամբ
բնավ ավելի ուժ չունի, քան թե անգամ չեղողը. արդ
յեթե նա իրավունք ունի այն խնդրի վերա խոսել
(ինչպես և պիտի ունենա), որագրապեստը վեր ուրե-
նքով զրկվում և հասարակաց ազգի ունեցած իրավուն-
քից:

Ազգային վարչությունը փակել կամելով որագիրների
բերանը, կասկածանքի տակ և ձգում յուր անձը հա-
սարակաց ազգի դատաստանի առաջև. պատճառ, ով վոր
բռնություն և գործ դնում, նա յերկյուղ ունի, իսկ վոր
վախենում և, նա մաքուր չե. նա լուելյայն խոստովա-

նում և յուր դատապարտելի անսրբությունը, վոր ամեն
որագրական խոսքից ազդու յե և ժողովրդին զգալի:
Մեզ թվում և, թե այսքանս պարտական եյին զիտե-
նալ նոքա, վոր ձեռք են ձգում ազգային դեկը կառա-
վարելու:

Ինչ վոր վերաբերվում և անձնական պատվի չգիպ-
չելու մասին, ևս առավել անտեղի յե, յեթե Քաղա-
քական ժողովը պահանջում և ձեռագիր: Այն մարդը
միայն կարող և բողոքել, վորո պատիվը վշտացրել և
արատավորել եյին հանիրավի, բայց վոչ մի դատաս-
տանատուն կամ ատյան առանց բողոքի դատ սկսելու
իրավունք չունի: Մեղում, հանիրավի մարդու պատիվ
արատավորած չե, և յեթե արատավորած ևս լիներ,
այն ժամանակ դատախազը պիտի մասնավոր կերպով
դատ բանար Մեղուի ընդդեմ: Վորեիցե կառավարու-
թյուն կարող և որենք դնել այս կամ այն բանի մա-
սին և դանցառուն դատապարտել, բայց վոչ մի կառա-
վարություն չե պահանջում, վոր ազգը ստորագրու-
թյուն տա այս և այն որենքը պահելու, վորովհետև,
յեթե պահանջեր, պիտի ծաղր արած լիներ յուր որեն-
քը, ցույց տալով թե ուժը որենքի մեջ չե, այլ ստորա-
գրողի ձեռագրի մեջ և այդ զիպվածում նա կարող եր
դատապարտվի վոչ վորպես որինազանց, այլ իբրև
ուխտադրուժ: Բացի սորանից, անձնական պատիվ և
նմանապիսի բաների վերաբերյալ դատաստանը ազգա-
յին ներքին գործ չլինելով, այն, և Քաղաքական վար-
չութենից դուրս, ինչպես Մեղում, նույնպես և մի այլ
մարդ կարող և անպատվել յուր ընկերը, բայց դորա
համար կա տերության դատաստան և որենք, վոր առ-
տնին Սահմանադրութենից մի փոքր տարբեր և, կար-
ծենք: Յեվ մեզ թվում և, թե նաև տաճիկ ատյանը

ապելի լայնասիրտ ե, քան թե ազգային վարչությունը, բոտ վորում Մեղուի հրատարակողը, Գաղաքական ժողովի մեծագիր գանգատներից հետո, Դուռը յերթալով ե այնտեղ «մարդասիրական քաղցր ընդունելության հանդիպելով» վերադառնում ե խաղաղությամբ յուր տունը. իսկ թե Մեղուն արգելած չե, դորա ապացույց կարող ե լինել նույնիսկ Մեղուի թերթը, ուր այս անցքերի պատմությունը դրած ե ընթերցողի առաջը:

Մեք միշտ դատապարտել ենք, յերբ մի մարդ վորոնում ե ոտարի պաշտպանությունը, բայց նույնպես դատապարտել ենք ե դեռևս պիտի դատապարտենք ազգային անպիտան դործակալքը, վոր յուրյանց լուծը ոտարի լծից շատ առավել ծանրացնելով, ստիպում են խեղճ ազգը ոտարի լծի վերա նայել, վորպես մի յերանացուցիչ քաղցր բեռի վերա: Մեր ազգի բոլոր թշվառության աղբյուրը այս բանի մեջ ե անա: Անտառը ջարդող կացնի կոթը անտառի փայտիցն ե լինում միշտ:

Լավ կ'ընթանար վարչությունը, յեթե յուր ուշադրությունը դարձնեք մարդոց պատիվը ստուգապես վշտացողների վերա, ե վոչ այնպիսի տեղում, վոր բնավ «ավագակների այր» չե, ե վորո պատիվը ապաստան ե այսոր վարչության ժրագլխությանը:

Վարչությունը չէր լսում, յերբ Այսահակը Յուսկյուտարի բեմերն եր թնդեցնում, ազնիվ Մյունատիու ընդդեմ ցոփաբանելով. «Իրենք պիտի տան յեղեր պատիժը, տերությունն ե տվել»: Մորոս գրեզ: Մյունատիու ե վոչ կոշիկների խրացը արժանի յիս լուծանել: Մյունատին կարոտ չե նոր ի նորո ընծայվելու ազգին, նա կարոտ չե ե ընծայության թղթերի, նա

ազնիվ մարդերի կողմից, թող թե մի շաղակեր ազնավից: Մյունատին «զբարեք պատերազմն պատերազմեցաւ, զհաւատան պահեաց». իսկ ով ե Այսահակը, արժանահիշատակ Թաղիադյանցի կնքած յեզի փակաւր: Վո՛հ, պիտո յե Արարիա գնալ նորա պատմությունը իմանալու համար. Զեղգայի քարերը լեզո՞ւ ունին... ե Յերուսաղեմի նվիրակ Սահակ վարդապետի վերջին բուպենների պատմությունը քաջ գիտեն.... որ ընթեռնուն, ի միտ առցէ:

Յեվ այդպիսի մի մարդ.... ողորմի՛մ քեզ, եկեղեցի՛ Հայաստանեայց, մեր գրիչը չե կամենում գրել այն պաշտոնի անունը, վոր նա ունի այսոր:

Այս ասելով, բնավ դեպի բռնություն չենք հրավիրում Վարչությունը, այլ վոր տեսչության հավատացած մի սուրբ տեղի պատիվը պահե ե յուր ստորագրած ստահակին խրատ տա, վոր Մյունատիու ընդդեմ թե ասելիք ունի, այնտեղ չասե, այլ որագիրների մեջ, ե վոչ յուր սատուերնական խնճույքներում. տարին տասներկու ամիս արեղաթողի տոն ե նոցա համար, ուստի ե միշտ կարող ե մոլիլ:

Բայց բուն «անձնական պատվի չդպչելու» խնդիրը քննելով, տեսնում ենք, վոր դա մի խայծ ե, վարչության բռնակալության կարթի ծայրը անցուցած ե տղայական ու ծիծաղաշարժ մի խայծ. պատճառ, անձնական պատվի չդպչել հասկացել են ե պիտի հուկանան, յերբ մի որագիր հրապարակ ե հանում այս կամ այն պաշտոնական անձին ըստ պաշտոնի չարագործությունի. ապա թե վոչ, արդյոք վորո՞ւ պատիվը վշտացուցին: Վոչ վոք կարող ե մարդու պատիվը արտաավորել. «Ոչ ոք վնասի, եթէ ոչ յուրմէ». իսկ արդ, յեթե մարդը ինքը յուր գործերով արատավորել

և յուր պաշտոնատարությունը, յուր անձը. ասենք միանգամայն, յեթե աշխուժանայիվ վոչ միայն հանցավոր չե նա, այլև վարչության հարգությանը արժանի, այդ գործերը հականե և հանվանե հրապարակի առաջն ղնոյն և պատժի և դատապարտության արժանին: Վկր որենքով, ի՞նչ արդարությամբ:—Հը՛մ...

«Եւ օրէնս արդարութեան բռնութիւն մեր եղիցի... դարանակալ լիցուք արդարոյն, զի դժպիհ եղև մեզ և հակառակ կայ գործոց մերոց, և նախատինս զնէ մեզ զյանցանս օրինացն և բամբասէ... ծանր է մեզ և տեսանելն զնա, զի աննման են այլոց կեանք նորա և այլազգի շաւիղք նորա: Ի գարշութիւն համարեցաք նմա, և խորշի ի ճանապարհաց մերոց, իբրև ի պղծութեանց... Մահու խայտառակութեան դատեսցուք զնա...» Հիանալի...

Այս բոլոր գրվածը կատարելոց հետո, Մեղուի թաղմանից վերադառնալով, «խահվե մըն ալ առեք», գուցե այն ժամանակ «ինք զինքներդ գտնաք» և ազգի խնամածության վերա դարձնեք գոնե քառորդը այն զգաստ ու արթուն ուշադրության, վոր ունիք Մեղուի վերա:

Բայց խրատ մի տամ ձեզ, զգուշ լացեք, վոր Մեղուից փախչելով, յեգիպտական շանաճանճից չբռնվիք, վոր Մեղուի նման մեղր և մոմ չտալուց հետո, կարող է և առ ի մահ խայթել: Վնչ ցայն չափ պիտի վշտանայիք, յեթե տերության առթելով յերեսի վերա մնայի՞ր ազգի գործերը: Վնչ այնքան պայրանայիք, յեթե կառավարութեանից հալածվեր տպագրության ազատությունը, բայց մինչև ի մահ արտում ենք, յերբ լույս ցերեկով տեսանում ենք, վոր ազգի ցավերին դարման

տանելու խորհրդով ընտրած պարոնները յուրյանց մատով հանում են ազգի աչքը. դառն արտասուք են թափվում մեր աչքից, տեսանելով, վոր այդ պարոնները, այժ, կառավարության մտքից ևս չանցած բռնություններ են հնարում ընդդէմ ազգին, փոխանակ արդեն յեղածի դառնությունը ամոքելու:

«Ո՞ տայր զգլուխս իմ ի ջուր և զաչս յաղբիւրս արտասուաց և նստեալ՝ լայի զթշուառութիւն ազգիս»:

Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանճարց հիւսիսականաց վեհագոյն:

Ողորմի՛մ քեզ, եկեղեցի Հայաստանեայց...

Մի քանի հետաքննութաց որագիւրք տակաւին ուսած չլինելով, թե ճշմարտության չափը բարեկամությունը կամ թշնամությունը չե, թե յերկու մարդ կարող են միմյանց ներհակ կարծիք ունենալ, առանց միմյանց թշնամի լինելու, առանց միմյանց գլխին անեծք կարդալու, թե առին ու թռան, վորպէսզի ավելի վորոշ կերպով ցույց տան ազգի վողջամիտ մասին յուրյանց վորպիսությունը և ընտրած ճանապարհների ուղղությունը:

Արշալույս. 14 դեկտեմբ. 1863. Թիվ 716. Զմյուռնիա:

«Մեղու հանդիսին խմբագիրը Քաղաքական ժողովուրդն ազգասիրական տնորենությանցը հնազանդիլ չուգելով, նույն ազգային մեծարգո ժողովը հատուկ հայտադրով մը խնդրեց Բարձրագույն Դռնեն, վոր հրաման տա առժամանակյա կերպիվ դադրեցնելու հիշյալ հանդիսի հրատարակությունը»:

Յերազդ դեպի բարին, Արշալույս:

Ո՞ւշք են և ի՞նչ են Քաղաքական ժողովի ազգասիրական տնորենությունքը, վորոց չե կամեցել հնազանդիլ Մեղուն. յերբ և ո՞ւր: Մեք կարծում ենք, թե մաքուր խղճմտանքը պիտի լինի մի որագիւր հրատարակողի ուղեցույց և վոչ թշնամական ախտերը և բորբոսած դաժանությունքը: Մի՞թե կարող եյին պատիւ բերել Արշալուսին նորա անհիմն խոսքերը, վոր մեք մեջ բերեցինք. մի՞թե ստուգապես հավատում ե Արշալուսք, թե կարգացողը չե հասկանալու, թե ի՞նչ հոգուց եյին բղխած այն տողերը:

Ահա և Մասիսի 617 համարի մեջ Մեղուի մասին հրատարակածը:

«Մեղու հանդեսին խմբագիրը Քաղաքական ժողովեն քանիցս անգամ ժողովի ներկայանալու հրավեր ընդունելով մտիկ չընելուն և չներկայանալուն համար, Քաղաքական ժողովը հատուկ հայտագրով մը հիշյալ թերթին առժամանակյա դադարումը խնդրեց Բարձ. Դոննին»:

Մասիս, յեթե քեզ մի փորձանք պատահեր և ստուգապես դադարեցիր, Հյուսիսափայլը յերաշխափոր ե, վոր Մեղուն չեր լինելու քո զժբախտության փողահարը, ուր մնաց, վոր չեղած հրավերներ հնարել և մի խոսքով մի ամբողջ վիպասանություն (Յերես 226):

Ստույգ յեղելությունը պատմեց Մեղուն համարով և, թող այս, նոքա, վոր ձեր շրջակայքումն են, այլև նոքա, վոր այս հեռավոր հյուսիսումս, յերբ համեմատեցին ստույգ իրողության ստույգ պատմությունը ձեր տված տեղեկության հետ, հասկացան բանի զորությունը և չկարողացան ձեզ գովել:

Ինչո՞ւ այդ տեսակ դործերով անպատվում եք առհա-

սարակ որագիւրքը, տեղիք տալով ամբոխին կարծել—
ըստ վորում խելացի մարդիկ կարոտ չեն առաջնորդի—
վորպես թե որագիւրի պաշտոնն ե յուր ախտերին ծառայելով, ամենայն նվաստություն հանձն առնուլ....

ՆԱԼԲԱՆԻՅԱՆԻ «ԱԶԳԱՅԻՆ ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ»-Ը

«Ազգային թշվառություն»-ը Ստ. Նազարյանի ստորագրությամբ առաջին անգամ լույս է տեսել «Հյուսիսափայլ»-ի 1864 թ. ԱՅ-ում, դրա համար էլ այս յերկը չի մտել Ա. Զամինյանի խմբագրությունում 1906 թվին լույս տեսած Նալբանդյանի յերկերի 2-րդ հատորի մեջ և, ընդհակառակը, Ստ. Նազարյանի հրատարակչներն այն զետեղել են նրա յերկերի 1-ին հատորում, այնինչ Ղ. Աղայանն իր մեմուարներում, գեո 1884 թվին, միանգամայն հավաստի կերպով վկայում է, Վոր «Ազգային թշվառություն»-ը Մ. Նալբանդյանի հեղինակությունն է:

Աղայանը 1863 թվի վերջերից մինչև 1864 թ. վերջերը, իբրև գրաշար, աշխատում էր «Հյուսիսափայլ»-ի խմբագրատանը: Նա յեր 2-րդի «Ազգային թշվառություն»-ը, հետևապես նրա վկայությունն իրազեկ մարդու վկայություն էր, և այդ չէր կարելի անտեսել: «Աշխատակից չունեք,—գրում է Աղայանը Նազարյանի մասին,—ամեն ինչ ինքն եր գրում, ինքն եր թարգմանում, շատ անգամ վոչինչ բաներ և զանազան կեղծ անուններով: Մի հոգված միայն, Վոր կըրում է «Ազգային թշվառություն» վերնադիրը՝ Նալբանդյանցի գրածն էր. թեև Նազարյանցի իսկական անունն է ստորագրված:» (Ղ. Աղայան—«Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էջ 56):

Լեոն իր «Ստեփանոս Նազարյանց» աշխատության 2-րդ հատորում Վորոշ տարակուսանքներ է հայտնել այդ հոգվածը Նազարյանի գրչին պատկանելու վերաբերյալ: Նա միանգամայն իրավացիորեն նկատում է, Վոր՝ զԺողովրդական իրավունքի ազատության և առաջադիմության սկզբունքները այդպեղ նկարագրված և պաշտպանված են մի անսովոր յեռանդով ու զեղեցիկ արտաբանությամբ, նույնիսկ Վոճն էլ այստեղ ուրիշ է, և Նազարյանի լեզվին, գրելու ձևին Վարժ մարդը դժվարությամբ և կարողանում հավատար, թե այդ հոգվածն էլ պատկանում է նրա գրչին»:

Զնայած դրան, Լեոն, այնուամենայնիվ, հրաժարվում է Նալ-

բանդյանին ձանաչել իբրև այդ աշխատության հեղինակը: Նա ծանոթ էր Ղ. Աղայանի վկայությանը, բայց դրան չէր հավատում:

Այժմ արդեն հայտնաբերված փաստերն այն մասին, Վոր Նալբանդյանին թույլատրված էր բանտում գրական-գիտական աշխատանքներով զբաղվել և Վոր նրան, գոնե պաշտոնապես, արգելված չէր «Հյուսիսափայլ»-ին աշխատակցել, գալիս են միանգամայն հավաստելու, Վոր այդ գործն անվիճելիորեն պատկանում է Նալբանդյանին, և հարցը սպառված համարելով, մենք ավելորդ ենք համարում բանասիրական, վոճական մանրամասնությունները մեջ մտնել:

Նալբանդյանի հրապարակախոսությանը, գրական Վոճին, կյանքի հանգամանքներին ծանոթ բանասերի համար Վոճ մե կասկած չի մնում, Վոր «Ազգային թշվառություն» նրա գրչի արգասիքն է:

Հարց է առաջ գալիս, թե ինչու Նազարյանը Նալբանդյանի հոգվածի տակ իր անունն է ստորագրել: Միանգամայն հաստատուն կերպով կարելի յե պնդել, Վոր Նազարյանն այդ արել է ոուկ քաղաքական նկատառումներով:

Նա չէր կարող հրատարակել Նալբանդյանի, իբրև քաղաքական մեղադրյալի, իսկական ստորագրությամբ Վորեն գործ, առանց «Հյուսիսափայլ»-ի գոյությունը ճակատագրական վտանգի մատնելու և իրեն վոստիկանական կասկածանքների տակ գնելու:

«Ազգային թշվառություն»-ը թեև գրված է 1864 թվի փետրվարին, բայց, ըստ էության, նա կազմում է 1860—62 թվերին արևմտահայ կյանքի շուրջն ունեցած Նալբանդյանի մի շարք գրական յեղութներ (Մեղու-ին ուղղած նամակը՝ 1860 թվին, Յեղու տողը՝ 1861 թվին և այլն) շարունակությունը՝ սահմանադրական պայքարի նոր պայմաններում:

Սկսած մոցյալ դարի 60-ական թվականներից, յերկրի կապիտալիստական զարգացման զուգընթաց, աշխատավորական լայն մասսաների դրությունը Թյուրքահայաստանում ավելի ու ավելի անտանելի յեր դառնում ֆեոդալական շահագործման ավելանում էր նաև կապիտալիստական արտատնտեսական շահագործումը:

Հայ աշխատավորությունը բռնել էր մասսայական պառպարիզացի ու գաղթի ուղին: Նրանք լցվում էին Թյուրքիայի կենտրոնական քաղաքները՝ Պոլիս, Երզրում, Տրապիզոն և այլն:

կ. Պոլսում, 1860 թ., կային տասնեկինգ հազար պանդուխտներ: «Մենք սարսափում ենք,—գրում է Նալբանդյանը,—յերբ աչք ենք ձգում այն անշքացած, անապատացած աշխարհի վրա, ուր յերբեմն փողփողում եր Արշակունյաց հաղթակիր զորավար, ուր այժմ մեր խեղճ, անտեր և անողնական ժողովուրդը միլիոնավոր բազմությամբ, թշվառության, հարստահարության և հուսահատության միջև հնարավոր ծայրը հասած, փոխանակ արտասուք, արյուն և քամում աչքերից, յերբ լաց և լինում, և ուր, դարձյալ, հայակերպ և զինեղանավ վամպիրները տակավին չեն կշտանում անմեղ զոհի—խեղճ ժողովուրդի—արյունը ծծելուց»:

Գավառական աշխատավորութունը հենց այն «խեղճ, մերկ ու քաղցած հայն եր», վորի վրա առաջին անգամ Նալբանդյանը հրավիրեց հասարակության ուշադրութունը և հայտնեց իր պատ-բաստակամութունը «վոչ միայն բանիւ և գրչով, այլև զենքը ձեռքին» կռվելու նրա իրավունքների համար:

Նալբանդյանի անմիջական ղեկավարությամբ ու աղղեցու-թյամբ պոլսահայ առաջավոր ղեմակրատիայի ներկայացուցիչները, «Մեղու»-ի շուրջը համախմբված ընդ յերեքստարդությունը», սկսեց կենդանի, աշխույժ հետաքրքրութուն հանգես բերել ղեպի գավառական աշխատավորութունը, բուն ժողովուրդը: «Մեղու»-ի գործունեության այդ կողմը շատ բարձր եր գնահատում Նալ-բանդյանը, յերբ 1864 թվին «Աղգային թշվառության» մեջ գրում եր՝ «Գավառի գրութունը նկարագրեց «Մեղուն»—Վաստաբանականի անայցել թշվառութունը օտորագրեց «Մեղու»-ն, իզնատիոսի գլխակը վրայից հանեց «Մեղուն»... Գավառ չթողեց, քաղաք չթո-ղեց, գեղ չթողեց, թաղ չթողեց, ամեն ծակ ու ծով մտավ յեղով «Մեղու»: Այո, Նալբանդյանին հենց այդպիսի մամուլ եր պետք, վորպեսզի կարողանար իր սկսած ղեմակրատական շարժումը զլխավորել և, հարկ յեղած զեպքում, մասսաներին նախապատ-բաստել համաժողովրդական ազատամբության համար:

1860 թ. ոգոստոսի 25-ից հետո գործադրության մեջ մտած սահմանադրութունը լուրջ խոչընդոտներ հանդիպեց: Կղերա-ֆեոդալական դասերը, ամիրայութունը, Պոլսի ու Յերուսաղեմի պատրիարքութունները և, մինչև անգամ, Նշմիածինը, այն հա-մարում էյին «պետութուն պետության մեջ, վոր լուկ յերկու նպատակով և հառաջացած, նախ՝ ազգը սալթ անհավատ

ընեկու,—յերկրորդ, տերության դեմ ապստամբե-ցնեկու»: Այս հողի վրա բորբոքված պայքարում, վորը տեկց 1860 թվից մինչև 1863—64 թվերը, լիբերալները լքեցին դեմոկրա-տիային և անցան ամիրայության ու կղերա-ֆեոդալական վեր-նախավերի կողմը՝ վորոնց դեմ, ղեմակրատիայի հետ միասին, պայ-քարում էյին մինչև 1860 թվի ոգոստոսի 25-ը: Բուրժուազիայի այս անհետևողական զրբը նկատի ունի Նալբանդյանը, յերբ գրում է՝ «Սահմանադրության բարեկամների միակ զենքն եր ճշմարտու-թյունը, վոր լուսավաշլ էյին կացուցանում հայկական խոս-քի միջնորդությամբ, գրիչը ձեռքին անձանձիր ճգնելով և վորով-հետև ճշմարտութունը չունի մասն, չունի վարձ, ուստի և ոտարտի չեր, յերբ վոմանք ճանապարհի կիսից յետ դարձան, յերբ մյուսները լավ ողիկեցի դարձան, յերբ մի քանի ուրիշներ անգլիական տրիմմերու-թյան ուրիշակը ցույց տվեցին» (ընդգծ. մերն ե. Ա. Մ.):

Նալբանդյանը ընհապատում է լիբերալների՝ սահմանադրա-կան բուրժուազիայի պարագլուխ Սերվիլենին, վորը «չկամեր գործ զենի յուր բոլոր աղղեցութունը լիամասն կերպով»:

Թյուրք կառավարութունը ոգտվելով հայերի ներքին գծու-թյուններից, 1861 թ. ոգոստոսի 16-ին ժամանակավորապես դադարեցրեց սահմանադրության գործադրումը՝ մինչև 1862 թ. Նույն թվի փետրվարի 14-ին, առանձին հրամանագրով, նա պա-հանջում է յոթ հոգուց կազմված մի հանձնաժողով ստեղծել, վորը պետական հանձնաժողովի (11 հոգի) հետ միասին ըննու-թյան է առնում Սահմանադրութունը և այն ներկայացնում կա-ռավարության ի հաստատութուն Սահայն կառավարութունը գործն սկսում է ձգձգել՝ մի բան, վորը հենց կղերականության ու ամիրայության միակ նպատակն եր: Սակայն դա չի հուսա-հառեցնում ժողովրդին՝ նա առաջավոր յերիտասարդության և «Մեղու»-ի ղեկավարությամբ շարունակ անհանգստացնում եր ամիրաներին՝ իր հետեողական պահանջներն առաջադրելով: Յեվ յերբ խրոդ դասերը սահմանադրությանը լուծում չտվին, ղեմ-կրատիան 1862 թ. ոգոստոսի 1-ին ուժեղ ցույց կազմակերպեց: Ժողովուրդը հարձակվեց պատրիարքական շենքի վրա մի պահան-ջագրով՝ անհապաղ իրեն հանձնել Սահմանադրութունը: Պատրի-արքի տեղապահը և սահմանադրական ղարչության անդամները

փորձեցին խորամանկությամբ ժողովրդին հանգստացնել, բայց ժողովուրդը բռնի կերպով ցրեց սահմանադրական վարչության ժողովը, բոլոր պաշտոնյաներին պատրիարքարանից դուրս վաճառեց, շենքի դուռը փակեց և հեռացավ: Դեպքի մասին հաղորդվում է Սեյիմ փաշային, վորը նույն օրը վրա հասնելով՝ զենքի ուժով ցրեց ժողովրդին, իսկ հաջորդ օրը փաշան, դարբնի միջոցով, բացեց պատրիարքարանի դուռը և պաշտոնյաներին իրենց տեղերում հաստատեց:

Այս դեպքերի ազդեցությամբ տակ, 1863 թ. մարտի 14-ին, Յուսուֆյուլաթի մեջ 25 հոգևորականից և 70 աղխարհականից կազմված, մեծ ժողով գումարվեց, ուր մշակեցին մի աղերսագիր՝ ուղղած կառավարությանը, վորով խնդրում էին Սահմանադրությունը փերահաստատել: Կառավարությունը արամադիր եր ընդմիջող վոչընչացնել Սահմանադրությունը, բայց վախենալով ժողովրդական հուզումներից, սկսեց խոստումներ տալ և գործը նորից ձգձգել: Մի վերջո նա ստիպված յեղավ 1863 թ. մարտի գործադրության մեջ գնել բազմիցս վերամշակված ու, Նալբանդյանի արտահայտումով՝ «թլպատված» նոր Սահմանադրությունը, վորը 1863 թ. մարտի 25-ին հանդիսավոր կերպով ընդունվեց պոսահայերի ընդհանուր ժողովում: Հենց այդտեղ էլ ընտրվեց 10 հոգուց կազմված մի ժամանակավոր գործադիր և վարչական մարմին, վորի մասին խոսում է Նալբանդյանը «Ազգային թշվառություն»-ում:

Նոր սահմանադրությունն այլևս իր մեջ դեմոկրատական վոչինչ չունեց և, ընդհակառակը, դա ռեակցիայի հաղթանակն եր ընդդեմ դեմոկրատիայի: Ահա թե ինչու «Մեղու»-ն Սահմանադրության հաստատումից հետո էլ, կրկին շարունակում եր պայքարել սահմանադրական վարչության դեմ, մերկացնելով նրա հակաժողովրդական եյությունը: Այդ առթիվ Նալբանդյանը գրում է՝

«Ազգային վարչության անիվը սկսավ կատարել յուր շըրջանը, բայց այդ վարչությունը աչըր ձգեց արդյոք, վոր տիսաներ, թե ինչ վիճակի մեջ ե ազգի կացությունը գալուստներում: Ականջը բացեց արդյոք լսելու համար ազգի աղետներով լողողները յուր ներքին հալածողների և հարստահարողների ընդդեմ...»:

Սահմանադրական վարչության հակաժողովրդական արարք-

ներից մեկն էլ «Մեղու»-ի դեմ արած հարձակումներն ու այն փակելու համար հանած վորոշումն եր: Նալբանդյանը գրում եր, վոր իր ձերբակալությունն աղետացեր եր դեմոկրատական շարժման համար, իսկ «Մեղու»-ի փակումը, նրա կապի խզումը ժողովրդական մասսաներից, կարող եր ավելի մեծ հարված լինել: Ահա թե ինչու նա բանտում նստած ժամանակ անգամ, հետևում եր Պոլսում կատարվող անցքերին և, դեռևս մեզ անհայտ ճանապարհներով, ստանում «Մեղու»-ն (վորը, Ալվազյանի շնորհիվ, Խուսաստանում արգելված եր, և վոչ մի առիթ բաց չեր թողնում իր արևմտահայ բարեկամներին խրախույս կարգալու, ռեակցիայի ներկայացուցիչներին մերկացնելու և նրանց դեմ հետևողական պայքար ծավալելու համար: Այդ նպատակով ե գրված «Ազգային թշվառություն»-ը, «Մեղուի» լեզվով՝ բանաստեղծությունը, այդ նպատակին և յեն թարկված նաև «Սոս և Վադիթեր»-ի կրիտիկան:

Նալբանդյանը շատ լավ գրում եր, վոր արևմտահայ Սահմանադրությունը ինքնաստիճյան մի վորոշմելի բան եր և նրա պայքարը, ըստ եյության, վոչ թե սահմանադրության համար եր, այլ դեմոկրատական շարժման անարգել զարգացման ու ծավալման հանձին «Մեղու»-ի դեմոկրատիայի գրաված-հասարակական դիրքերի ամրապնդման համար եր:



ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ինտերառախի կողմից	61
2. От Института	7
3. Յերկու տող	8
4. Նալբանդյանի «Յերկու տող»-ը	9
5. Ազգային թշվառություն	49
6. Նալբանդյանի «Ազգային թշվառություն»-ը	59
	80

Տեխ. խմբագրիչ՝ Վ. Մանուկյան
Սրբագրիչ՝ Վ. Մելիքեթյան
Կանտրոլ սրբագրիչ՝ Ռ. Տոնյան

Հանձնված և արտադրության 23/X 1939 թ.

Ստորագրված և տպագրության 7/XII 1939 թ.

Գլավիլիտի լիազոր ն. 2922, Հրամ. № 50, պատվեր № 65.

Տիրած 2000, ֆորմատ $72 \times 105\frac{1}{32}$ 5 $\frac{1}{2}$ տպագրական մամուլ.

1 տպ. մամուլում 25600 տպ. նիշ:

ԱրմՖԱն-ի տպարան, Յերեվան, Լենինի փող. № 67.

ՀՀ Ազգային գրադարան



NL0196017

9510 2 0: 50 4.